№ 264 ՇԱԲԱԹ, 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 264

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բայց կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ:

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ: Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ
ԲԵՄԱԿԱՆ 30-ԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
Ն. Մ. Գաբունիա-Ցագարելիի
Կիրակի, նոյեմբերի 29-ին

ՑԵՐԵԿՎԱՅ ժամը 12-ին. տօնակատարութեան հանդէսի բացումը, ողջունումն երգեցիկ խմբով և նուագածութեամբ, շնորհաւորանքներ պատուիրակների, ընկերութիւնների և հիմնարկութիւնների ներկայացուցիչների ու մասնաւոր անձերի կողմից և այլն: Երգիչ Ի. Պ. ՍԱՐԱՋԵՎԸ կերգէ իր ուղերձը: Ջութակահար Դ. Դաւթեան կը նուագէ «Bach»-ի «Aria»-ն: Երգեցիկ խումբ վրաց ֆիլարմօնիական ընկ. և նուագախումբ Զ. Պ. Պալիեվի ղեկավարութեամբ:

ԵՐԵԿՈՅԵԱՆ ժամը 8-ին. վրաց դրամատիկ խումբը՝ մասնակցութեամբ Ն. Մ. ԳԱԲՈՒՆԻԱ-ՑԱԳԱՐԵԼԻԻ կը ներկայացնէ՝ 1) «Երկու որբեր», 5-րդ գործողութիւն, հեղ. Դէնների, թարգմ. Ցագարելիի, 2) «Քանդված օջախ», 3-րդ գործող., հեղ. Սունդուկեանցի, 3) վրաց դերասանների յարգանքը Ն. Մ. ԳԱԲՈՒՆԻԱ-ՑԱԳԱՐԵԼԻԻՆ, 4) «Խանում», I գործող., հեղ. Ա. Ցագարելիի: Վերջում ԱՊՕԹԷՕԶ:

Ներկայացումից ստացված դրամական ամբողջ արդիւնքը, նոյնպէս և այլ դրամական նուէրները կը յատկացվեն դրամագլուխ կազմելու Ն. Մ. Գաբունիա-Ցագարելիի ծերացած ժամանակ նրան ապահովելու համար:

Դրամական նուէրները խնդրվում է ուղարկել կոմիտէտի գանձապահ Ալէքսանդր Պետրովիչ Սարաջէվի անունով:

Տոմսակները նոյեմբերի 20-ից վաճառվում են թատրոնի կասսայում:

Վրաց Դրամատիք. Ընկ. Վարչութիւն և Յոբելեանական Կոմիտէտ
(առ.) 1259. 0—3

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
Զուբալօվի անուան
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊ.
Հայկական սեկցիա
Շաբաթ, նոյեմբերի 28-ին
ԲԵՆԵՖԻՍ
ՍԵՒՈՒՄԵԱՆԻ
Հայ դրամ. ընկ. դերասանների խումբը
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ
կը ներկայացնէ
„Ուրիէլ Ակօստա“
Ողբերգ. 5 գործ. հեղ. Գուցկովի, թարգմ. Պալեանի
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին:
Տեղերի գները 5-ից մինչև 50 կոպ.
առ. 1270. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, շաբաթ, նոյեմբերի 28-ին
տեղի կունենայ
Ընտանեկան երեկոյթ
Երեկոյթին կը նուագեն սազանդարներ:
ԱԶԴ.—Հետևեալ «Ընտանեկան երեկոյթը» երեքշաբթի, դեկտեմբերի 1-ին:
առ. 1271. 1—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՈՆՈՒՄ
Երկուշաբթի, նոյեմբերի 30-ին,
Հայ դերասանական ընկերակցութիւնը
կը ներկայացնէ
Առաջին անգամ Ֆրանսուա Կոպպէի
յայտնի տրագեդիան
„Սեվերո Տօրելլի“
5 գործ. թարգմ. Տէր-Գէորգեանի
Մասնակցում է ամբողջ խումբը:
Տեղերի գները սովորական են:
Սկիզբն ուղիղ ժամը 8-ին:
Ռեժիսսեօր՝ ա. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ
(շ. կ.) (առ.) 1272. 2—1

ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՕՐ
ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆԸ
Մնալով այս ձմեռ Թիֆլիսում, ընդունում է ներքին և ջղային հիւանդներ:
Ցերեկվայ 1—3 ժ., երեկոյեան 6—8 ժ.
Լերմոնտովսկայա փող., տ. 21, բն. № 2.
Տելեֆօն № 221.
(օ. մ.) առ. 1213. 0—6

Հասարակական Ակումբ
Շաբաթ, նոյեմբերի 28-ին, երեկ. ժամը 1-ին
տեղի կունենայ
ԵՐԵԿՈՅԹ
Հետևեալ ծրագրով.
1) Գրական-երաժշտական բաժանմունք՝ մասնակցութեամբ Ն. Ա. Վիսելովզորովայի և Մ. Կ. Կրամսկոյի:
2) Ա. Ի. Խատիսեանի ռեֆերատը՝ Անդրէեվի վերջին հեղինակութիւնների՝ «Անաթեմայի» և «Անֆիսայի» մասին:
3) Զրուցաբանութիւն ռեֆերատի առիթով:
Մուտքը անդամների համար ձրի է, իսկ հիւրերը վճարում են 50 կոպ.:
Անդամները հրաւիրվում են վճարել իրանց անդամավճարը՝ 5 ր. առաջիկայ թւականի համար, ոչ ուշ՝ քան մինչև դեկտեմբերի 20-ը ս. թ.:
(առ.) 1266. 1—1

ՍՏՐԿԱԿԱՆ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Մեր հասարակութեան բերանում պտտում են զանազան գաղափարներ և սկզբունքներ, բայց երբ անհրաժեշտութիւն է ներկայանում այդ գաղափարները և սկզբունքները գործադրելու կեանքի մէջ, իսկոյն տեսնում էք մարդկանց մի օտարոտի վիճակում: Նրանք ամեն հնար գործ են դնում խուսափելու հասարակական պարտաւորութիւն կատարելուց:

Ահա մի պարոն, որ կրակ կտրած խօսում է փարիսեցիների, խարդախների, նենգամիտների և ստորաքարշների դէմ: Բայց մի ժամից յետոյ տեսնում էք նոյն պարոնին այն մարդկանց գրկում, որոնց նա հայհոյում էր և պախարակում, համարելով նոյն իսկ նրանց հետ շփվելը մի ժանտախտային դժբաղդութիւն:

Ահա մի ուրիշը, որ գանգատվում է ձեզ, թէ նա սարսափելի աղէտի է ենթարկվել այս ու այն սրիկայի շնորհիւ, բայց մի քանի ժամից յետոյ տեսնում էք երկուսին անոյշ ժպտում զրոյցի բռնված, որտեղ բամբասանքի մի մեծ բաժին էլ ուղղված է ձեր հասցէին:

Մենք յիշում ենք, երբ մի քանի տարի առաջ դրված էր Ալիշանի հոգեհանգստի խնդիրը, մի պարոն, որ նախընթաց օրը երկար ճառեր էր խօսում կրօնական անխտրականութեան և համբերողութեան մասին, դարձաւ յանկարծ ծայրայեղ ձևապաշտ և ամեն տեսակ միջոցներ էր առաջ մղում հոգեհանգիստը վերացնելու համար:

Հետևեցէք մեր կեանքի ամենօրեայ արտայայտութիւններին և դուք կը տեսնէք թէ ինչպէս մարդիկ ամեն օր ոտի տակ են տալիս այն, ինչ որ նրանք վեհ են համարում իրանց ճառերում, և ընդհակառակը գրկաբաց ընդունում են այն, ինչ որ նրանք քաղաքացիական ցասումով մերժել էին իրանց հաւաստիացումների մէջ:

Շիտակութեան, ուղղամտութեան և ինքնուրոյն վերաբերմունքի բացակայութեան շնորհիւ քայքայվել է մեր հասարակական և մասնաւոր կեանքը և կը շարունակվի քայքայվել, եթէ լուրջ միջոցներ, առողջ հոսանքներ չեն գայ հանելու մարդկանց այն տիղմերից, որի մէջ նրանք ընկել են և անամօթաբար թաւալվում են:

Ստրուկ, թուլամորթ մարդկանց յատուկ է եղել մշտապէս թեքվել և յարմարվել ուրիշներին, աւելի ուժեղ համարվողին:

Եւ ահա մեր առաջ ստրուկ մարդկանց տխրագին շարքեր, որոնք աշխատում են արտաքուստ երևալ այս ու այն համոզմունքների տէր, ինքնուրոյն, բայց իրապէս նրանք խղճալի դերերի մէջ են լինում միշտ և այդպիսով թէ իրանց բարոյական ճահճի մէջ են գցում և թէ դժբաղդութիւն բերում այն հասարակութեանը, որի մէջ նրանք ապրում են:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բեռլին, 26 նոյեմբերի

Ռէյխստագում վերնասրահները և նիստերի դահլիճը լի են: Ներկայ են պետական կանցլերը և բոլոր մինիստրները:

Առաջինը խօսեց պետական կանցլերը. նա մատնանշեց, որ բիւջէն կազմված է առանձին զգուշութեամբ. կարելի է ասել, որ այն իրականութիւնը, ինչ չափով մարդուն տրված է նախատեսելու ապագան, արդարացնում է սպասելիքները. բոլոր այն պահանջները, որոնք արգասիք են երկրի պաշտպանողական ոյժերի պահպանման անհրաժեշտութեան, բաւարարեցված են բիւջէով: Առաջին խնդիր հանդիսանում է երկրի ֆինանսական հաստատուն հիմունքները ապահովելը: Նրա վրա պէտք է աշխատեն միասին բոլոր կուսակցութիւնները, անկախ նրանից—կը շարունակվե՞ն, արդեօք, կամ, ընդհակառակը, կը դադարե՞ն նրանց քաղաքական տարաձայնութիւնները:

Այնուհետև կանցլերը յայտնեց, որ կամենում է սոսկ մատնանիշ անել այն դրութեան վրա, որպիսին գրաւել են գերմանական կառավարութիւնները հարկերի հողի վրա բռնկված կռւի վերաբերութեամբ. կառավարութիւնները հանդէս եկան միայն առանձին մթերքների թանգութեան դէմ, չը միջամտելով կուսակցական քաղաքականութեանը: «Երբեք գերման կառավարութիւնը,—ասաց կանցլերը,—չի լինի կուսակցութեան կառավարութիւն: Միմիայն արմատականութիւն և կենդանի հետաքրքրութիւն ունի նրանում, որպէսզի Գերմանիան բաժանվի երկու իրար հակառակ բանակի, որոնցից ամեն մինը առանձին դիրք կը բռնէ նոր հարկերի նկատմամբ: Հասարակական լայն խաւերը չեն ցանկանում ապրել երկարատև քաղաքական սենսացիայի մթնոլորտում: Ժողովրդի գործունեայ աշխատանքը պահանջում է մշտականութեան և կայունութեան քաղաքականութիւն, սակայն ոչ այնպիսի քաղաքականութիւն, որ ոչինչ չէ ճանաչում՝ բացի ռազմական «ռադիկալիզմ» և «ռէակցիա» բացագանչութիւնից: Գերմանիան, որ իր դրութիւնը ձեռք է բերել տոկուն աշխատանքով, կարող է այդ դրութիւնը պաշտպանել նոյնօրինակ աշխատանքով և ժողովրդական բոլոր ոյժերի աջակցութեամբ, ինչպէս այդ մինչև այժմ էր: Շահերի ընդհանրութիւնը ամեն մէկից պահանջում է առանձին ստեղծագործական գործունէութիւն Ես հաւատացած եմ,- վերջացրեց կանցլերը,—որ այս ճշմարտութիւնը, կը յաղթէ նաև այժմեան խռովութեան»:

Բէտման-Գոլվէգի ճառը յաճախ ընդհատվում էր աջակողմեանների և կենտրոնի բուռն ծափահարութեամբ և սօցիալ-դեմօկրատների ցասկոտ բողոքներով:

Կանցլերից յետոյ հանդէս եկաւ ստատս-սեկրետար Վերմուտ: Շօշափելով պետութեան ֆինանսական դրութիւնը, նա վկայեց, թէ անհրաժեշտ է 520 միլիօն ֆրանկի փոխառութիւն կնքել, անցեալ տարիների դեֆիցիտը փակելու համար: 1910 թ. բիւջէն կազմված է ծայրայեղ խնամքով և այն սկզբունքով, թէ ծախքերը կարելի է ծածկել նոր եկամուտներով: Պետութեան ֆինանսական տնտեսութիւնը կանգնած է այն ճանապարհի վրա, որ, կարելի է յուսալ, տանում է դէպի լաւագոյն զարգացումը: (Հ. Գ.)

Նիւ-Եորկ, 26 նոյեմբերի

Պուէրտօ-Կորտէցից հեռագրում են, որ նոյեմբերի 24-ին Գոնդուրասում յայտարարված է պատերազմական դրութիւն: (Հ. Գ.)

Բուդապեշտ, 26 նոյեմբերի

Վեկէրլէն ընդունվեց կայսրից ունկնդրութեան և յայտնեց նրան, որ ապարդիւն անցան այն ջանքերը, որոնք ուղղված էին համոզելու Ջիւշին նոր կաբինէտ կազմելու համար:

Կաբինէտի հրաժարականը ընդունվեց, բայց առժամանակ կաբինէտը կը ղեկավարէ գործերը: (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Ղեկավար շրջաններում լուր է տարածված, որ Ֆինլանդիայում հաստատվելու է փոխարքայութիւն:

Ասիական Արևելքում իրերի դրութիւնը լուրջ երկիւղ է ներշնչում: Այս օրերս կը գումարվի մինիստրների խորհուրդը: Վտանգի պատճառներն են Եապօնիայի մշտական պատրաստութիւնները:

Պետական Դումայի մահմեդական ֆրակցիան Աստրախանից հեռագիր ստացաւ, որ նահանգապետը փակել է բոլոր մահմեդական դպրոցները, որոնց մէջ ուսանում էին 500-ից աւելի աշակերտներ: («Б.»)

Կիեվ.—Ձերբակալվեց Կիեվի պօլիտեխնիքական ինստիտուտի պրօֆէսոր Բուզկին: («Б.»)

Մելիլլա, 26 նոյեմբերի

Գարկի պարագլուխը հպատակութիւն յայտնեց սպանական զօրքերին: (Հ. Գ.)

Լօնդօն, 20 նոյեմբերի

Գեներալ Կուրօկիի հրամանատարութեան տակ Եապօնիան Կորէա ուղարկեց 16 բատալիօն զօրք: («Г. М.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս.—Այստեղ հաւանական են գտնում պարսկական դեսպանի վերադարձը, եթէ թիւրքաց զօրքերը չը հեռացվեն պարսկական հողից:

Երէկ պարսից դեսպանը երկու անգամ խորհրդակցեց մեծ վէզիրի հետ:

Լուրերին նայած, նա դիմեց մեծ պետութիւնների միջնորդութեանը: («Б.»)

Թեհրան, 19 նոյեմբերի

Երէկ հրապարակօրէն մահվան պատժի ենթարկվեց Նադիր-աղան, յետադիմական ապստամբութեան պարագլուխներից մէկը: («Рѣчь»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Բեռլին.—Էնվէր-բէյի անակնկալ մեկնումը Բեռլինից կապ ունի նախագծվող բալկանեան ֆեդերացիայի հետ: Նա այցելելու է Սօֆիա և Բելգրադ, յետոյ նա ագիտացիա է մղելու թիւրքաց մամուլում յօգուտ ֆեդերացիայի: («Б.»)

Բեռլին, 20 նոյեմբերի

Կիսապաշտօնական թերթերում երևացին յօդուածներ ուղղված դէպի Թիւրքիան, որոնցում նա կշտամբվում է այն պատճառով, թէ Տիգրիսի և Եփրատի վրա նաւագնացութիւնը դարձրել է անգլիացիների մենաշնորհ: («Г. М.»)

Աթէնք, 20 նոյեմբերի

Կրետէի քրիստոնեայ և մահմեդական ազգաբնակութեան միջև կրկին սկսվեցին ընդհարումներ. երկու կողմից սպանված են 10 հոգի: («Г. М.»)

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 16 Նոյեմբեր

Նախորդ թղթակցութիւնս ռուսական նամակատուն յանձնելէ քիչ ետքը, կը լսենք, որ Իհսան Ֆիքրիի անունը ալ բերնէ բերան կը կրկնուի: Թերթերու մէջ ողորմելի տեղեկութիւններ կը տրուին, թէ Իհսան Ֆիքրի, որ ոստիկանութեան յանձնուած էր, ազատ թող տրուեցաւ, որով առիթ ունեցած է ան արտասահման փախչելու:

Փախչելու պէտք չունի. ազատ քաղաքացիէ մը աւելի ազատ ու անկաշկանդ, ման կուգայ իր ուզած տեղերը, կը հիւրընկալուի մեծ պալատներու մէջ. մեծ հիւրանոցներու մէջ ամենէն պատուաւոր հիւրն է: Հարցում եղած է Հիլմի փաշայի, թէ Պոլիս մտած է դատապարտուած խմբագրողը, ինչպէս կը ներուի, որ ազատ շրջի: Պատասխան տրուած է, թէ բերուած է, որ դատուի:

«Բերուիլ» չէր կրնար ըլլալ, որովհետև ան Եգիպտոս էր արդէն. մեր կառավարութիւնը ոչ թէ մարդ մը, այլ ճանճի թև մը, մոծակ մը իսկ Եգիպտոսէն բերել տալու ոչ հնարաւորութիւն ունի և ոչ կարողութիւնը: Ուրեմն յայտնապէս սխալ է ատ, և մանաւանդ թէ կեղծիք մը, որ անամօթաբար հնարած է վարչապետը:

Հաւանական է, որ Իհսան Ֆիքրի, գրպանները ոսկիներով բեռնաւորելէ ետքը, ճամբայ ելլէ դէպի Եւրոպա՝ նոր հաճոյքներու, նոր վայելքներու մէջ ծախսելու այն գումարները, որոնք տրուած ըլլան իրեն առատաձեռնօրէն իբրև վարձք մը իր արիւնի և քանդումի ծառայութեանցը: Նոյնպէս հաւանական է, որ դատուի, և անշուշտ արդարացնելու համար: Կըսուի թէ դատական բացառիկ ժողով մը պիտի կազմուի լսելու համար Հիլմի փաշային մեծայարգ հիւրը, և նախագահ պիտի անուանուի հանրային շինութեանց հայ մինիստրը՝ Պետրոս Հալաճեան: Բայց Հալաճեան, որքան պաշտօնատար, նոյնքան աւելի ևս պարկեշտ հայ, առաջին րոպէէն իսկ պիտի ըմբռնէ, թէ ծուղակ մը պիտի ըլլայ ատ իր բարոյական կեանքին դէմ, պիտի ջանան Իհսան Ֆիքրին արդարացնել այդ ձևով, կարենալ ըսելու թէ ժողովքին նախագահն էր հայ պարլամենտական մը, հայ մինիստր մը: Հալաճեան ապացուցած է, թէ նեղ պարագաներու մէջ ունի հոգեկան արիութիւն, գիտէ ըմբոստանալ ճնշումին ու բռնաբարութեան դէմ: Այսպէս, կամ, այդպիսի ծուղակի մը առջև, իսկոյն կըմբռնէ դաւադրանքն ու կը հրաժարի, և կամ յանձն կառնէ ոճրագործը դատելու այնպիսի անաչառութեամբ, որ դերև կելլեն իր դաւադիրներուն սնուցած անհուշ յոյսերը:

Իհսան Ֆիքրին առաջին անգամ ճանչցած է Թիւրք երիտասարդ մը, ու, խղճահար, դիմած է կառավարութեան՝ յայտարարելով թէ ինչպէս ներելի է թոյլ տալ, որ դատապարտուած մը, ոճրագործ հրապարակագիր մը, որու դէմ այնքան գանգատներ լսուեցան ու կը լսուին, այսօր ազատ ման գայ մայրաքաղաքին մէջ: Խեղճը չէր գիտցած, որ Իհսան Ֆիքրի մեծ-եպարքոսին արժանապատիւ, մեծապատիւ մեծարեալ հիւրն էր:

Անշուշտ ինքնին կարելի է մակաբերել,

Թէ որքան տխուր տպաւորութիւններ պիտի թողուր կառավարական այդպիսի ուղղութիւն մը հայ միտքերու վրայ։

Այս ամէնը կուգան, կը միանան հաստատելու դժբաղդաբար թէ՝ ան իր դերը ունեցած է Ադանայի արիւններուն մէջ, թէ՝ ան Ադանայի երդուեալ թշնամի մը եղած է։

Մեր բոլոր պարլամենտականները լսած են, թէ Իհսան Ֆիքրի Պոլիս է, ու մեծ-եպարքոսին պահապան թևերը կը տարածուին անոր թևերուն վրայ։ Այսօր պէտք խորհին առանձնաբար եզրակացութեան մը գալու համար, թէ իրմէ է, որ «Իթիդալի» խմբագիրը Պոլիս է, ու միևնոյն ատեն՝ մեծ-եպարքոսին ասպնջականութիւնը կը վայելէ։ Տարակոյս չկայ, թէ այդպիսի պատահականութեան մը առջև արդէն պատրաստուած ըլլալու է պարլամենտի տեր նախագահը, որուն ակնարկը կը բաւէ օդին մէջ տատանել տալու սոֆտաներու ձեռքերը՝ ի պատիւ նախագահին։ Թիւրքերը կըսեն. «Մինարէի չալան, խըլըֆը հազըրլար». այսինքն թէ Իհսան Ֆիքրին Պոլիս մացնել տալէ առաջ՝ պէտք է խորհուած ըլլան բոլոր միջոցները նոյն իսկ չիբախլայուած խոչընդոտներու առջև։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՏԱԼԻԱ ՄԵՐԱԲՈՎՆԱ ԳԱԲՈՒՆԻԱ-ՑԱԳԱՐԵԼԻ

(30-ամեայ բեմական գործ. յոբելեանի առիթով)

Կիրակի, նոյեմբերի 29-ին, վրաց հասարակութիւնը տօնում է վրաց բեմի տաղանդաւոր դերասանուհի Գաբունիա-Ցագարելիի բեմական բեղմնաւոր գործունէութեան 30-ամեայ յոբելեանը։

Յոբելեարուհին ծնվել է 1859 թ. փետր. 3-ին, Գօրի քաղաքում։

Գրել-կարդալը սովորել է իր տատից (մօր մայրը), որը ընդունակ մի կին է եղել և, ինչպէս ասում են, գրելիս է եղել նոյնիսկ բանաստեղծութիւններ։

12 տարեկան հասակում Ն. Մ.-ի հայրը յանձնում է մի ռուս ընտանիքի «ուսումը շարունակելու համար, որտեղից երեք ամսից յետոյ ուսման դասընթացքը աւարտած դուրս է գալիս» և իր տատի օրինակին հետևելով սկսում է ոտանաւորներ գրել, սակայն անաջող։ 1875 թւին, Գօրի քաղաքում, իշխան Ելիզբար Էրիսթավիի տանը, տրվում է մի ներկայացում. խաղացվում է Գիօրգի Էրիսթավիի «Ժլատ» պիէսը, որի մէջ Ն. Մ., 16 տարեկան հասակում, կատարում է Մօնավարդիսայի դերը։ Ներկայացմանը ներկայ է գտնվում վրաց բեմի ականաւոր գործիչ և մեկենաս Դաւիթ Էրիսթավին, որը Թիֆլիսից գնացած է լինում յատկապէս այդ ներկայացմանը ներկայ գտնվելու համար։

Նատալիա Մէրաբօֆնայի խաղը ներկայ գտնվողները հաւանում են, որից յետոյ Դաւիթ Էրիսթավին խնդրում է նրանից՝ Թիֆլիս գալ, իր նոր գրած պիէսի մէջ մասնակցելու համար։

1876 թւին, խոստման համաձայն, նա իր հօր հետ գալիս է Թիֆլիս և մասնակցում ներկայացմանը, ներկայ գտնվողների հիացմունքին արժանանալով. վերադառնալով իր ծննդավայրը, Ն. Մ. շարունակում է խաղալ և իրան շրջապատողներից շարունակ լսում է գովասանքներ իր տաղանդի մասին, որոնք խորհուրդ էին տալիս նորընծայ դերասանուհուն գեղարուեստի տաճարին նուիրվել։

Սոյնանման գովասանքներն ու խորհուրդները այնպիսի խոշոր տպաւորութիւն են թողնում նրա վրա, որ «շարունակ ներկայացման մասին է մտածում», և գործը հասնում է այն տեղը, որ նա, հակառակ իր հօր կամքի, գաղտնի փախչում է տնից և գալով Թիֆլիս՝ սկսում է ապրել իր ազգականների մօտ, այդ օրվանից նուիրվելով բեմին։ Այս հանգամանքը այնպիսի մեծ վիշտ է պատճառում նրա հօրը, որ նա երկար ժամանակ չէ ուզում հաշտվել իր աղջկայ հետ և նոյնիսկ նրա ամուսնութեան ժամանակ համարեա մերժում է պսակադրութեանը ներկայ գտնվել, սակայն զիջելով իր ազգականների թախանձանքին՝ վերջ ի վերջոյ հաշտվում է նրա հետ։

1879 թւին, նոր կազմակերպված վրաց դերասանական խմբի մէջ նա ուրախութեամբ ընդունվում է, որի մէջ մասնակցում էին տաղանդաւոր դերասանուհի Մարիամ Սափարօվան (Վասօ Աբաշիձէի կինը), Բարբարէ Կօրինթելին, Վասօ Աբաշիձէն, Կօտէ Ղիփիանին, Կօտէ Մէսխին, Ավքսէնտի Ցագարելին՝ դերասանուհու ապագայ ամուսինը և շատ յայտնի ոյժեր։

Այդ տարվանից սկսեց նրա աստղը փայլել։ Այդ տարին վրաց բեմի ոսկեդարն էր, որովհետև այդ գործի շուրջը համախմբված անձինք ամբողջ հոգով նուիրվել էին վրաց թատրօնը իր բարձրութեանը հասցնելու գործին։

Առաջին անգամ նրա յոբելեանը տօնվեց 1880 թւին։

Յոբելեարուհին մասնակցել է զանազան պիէսների մէջ, բայց առանձնապէս փայլել է «Խանումի» (Խանում), «Խաթաբալայի» (Խաժփերի), «Բէօր-Օղլիի» (Բիչքինէ), «Երկու որբերի» (Ֆրօշար) և այլ պիէսների մէջ։

Մենք, որ ականատես ենք եղել նրա խաղին մի քանի դերերում, պիտի ասենք, որ մեզ վրա թողել է հիանալի տպաւորութիւն։

Նրա ամուսինը, դրամատուրգ՝ ներկայիս հանգուցեալ՝ Ավքսէնտի Ցագարելին, իր պիէսները գրելիս՝ աշխատել է կանացի դերերի հերոսուհիների տիպերը յարմարեցնել այնպէս, որ համապատասխանի յոբելեարուհու ընդունակութիւններին։

1881 թւից, նա մտնում է յայտնի շըրջանները, գտնելով ամենուրեք սիրալիր ընդունելութիւն։

1882 թւին, Ն. Մ. ամուսնանում է Ա. Ցագարելու հետ, որը այդ ժամանակ վրաց դերասանական խմբի մէջն էր և ապա սկսեց զանազան թատերական գրուածքներ արտադրել։

Յայտնի ռուս գրող Օստրօվսկին, անձամբ ներկայ գտնվելով մի ներկայացման, երբ խաղացվում էր իր «Արդիւնաւոր պաշտօն» պիէսը, հիացել է նրա խաղով, տեսնելով նրան Կուկուշկինայի դերում։

Նրա խաղը նոյնպէս մեծ հիացմունք է պատճառել իտալացի յայտնի արտիստ Րոսսիին։

Իսկ մեր ծերունազարդ դրամատուրգ Գ. Սունդուկեանը, տեսնելով նրան և Մարիամ Սափարօվա-Աբաշիձէին իր գրած պիէսների կանացի գլխաւոր դերերի մէջ, շարունակ ասելիս է եղել, որ իր պիէսների հոգին նրանք են։

30 տարիների ընթացքում պարբերաբար մասնակցելով ներկայացումներին, մեծ հաճոյքով խաղում էր և ժողովրդական ներկայացումների ժամանակ։

Վերջին ժամանակները, Ն. Մ. առանձնապէս խաղում էր զանազան դերեր աննման կերպով պատկերացնելով հասակաւոր կանանց տիպերը։

Նա այժմ 50 տարեկան է և այսուհետև էլ նոյն եռանդով մասնակցելու է վրացերէն ներկայացումներին։

Լիակատար կերպով հաւատում ենք, որ հայ հասարակութիւնն էլ արժանաւոր կերպով կը վարձատրի յարգելի յոբելեարուհուն, ներկայ գտնվելով յոբելեանական հանդէսին։ Յ. Գասպարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ցխինվալ, 24 նոյեմբերի

Մեր աւանը, ճանապարհների վատութեան պատճառով, կտրված է արտաքին աշխարհից և զուրկ է կանոնաւոր հաղորդակցութիւն ունենալուց։ Ամառները, երբ եղանակները պարզ են լինում, այս կողմ ճամբորդողները մի տեսակ զմայլվում և ուրախութիւն են զգում բաց կառքով ճանապարհորդելիս այգիների ու մրգի ծառերի ճիւղերի հովանու տակով, բայց հէնց որ աշնանային անձրևները կը սկսվեն, նամանաւանդ գարնանը, երբ որ ձիւնը հալվում է, այն ժամանակ Գօրի քաղաքից մինչև այստեղ գալը անտանելի է դառնում։ Մի կողմ թողնենք ճանապարհի կէս աքշինանոց ցեխը, պատկերացնենք Պատարա-Լիախվի (Փոքր Լիախվի) գետի վարարումը, որի՝ չը նայելով կէս վերստ լայնութեամբ ջրի տարածութեանը, այնուամենայնիւ դարձեալ չէ բաւականանում և ողողում մերձակայ դաշտերն ու արօտատեղերը։ Իսկ սաստիկ յորդանալու դէպքում էլ ո՞վ կարող է անցնել նրա միջով. սակայն, չը նայելով դրան, անհրաժեշտ գործ ունեցողները երբեմն համարձակվում են մտնել յորդացած, կատաղած ջուրը՝ սայլերով կամ ձիով. բաղդաւոր են այնպիսիները, որոնց անցնելու միջոցին ջուրը ժայռի կտոր կամ ծառի կոճղ չէ բերում, որովհետև տարին այնպէս չի անցնի, որ Պատարա-Լիախվին 7—8 մարդ ջրախեղդ չանի, իսկ անասուններինը՝ թիւ ու համար չը կայ։

Մինչև ե՞րբ պէտք է այսպէս շարունակվի. միթէ պատշաճաւոր իշխանութիւնը ուշադրութեան չը պէտք է առնի այս և սրա նման երևոյթները, մանաւանդ որ սա միակ ճանապարհն է Ցխինվալի շրջանի և ամբողջ լեռնային Օսեթիայի համար։ Հարկաւոր է շուտափոյթ օգնութեան հասնել և օր առաջ ձեռնարկել կամուրջի կառուցման, որպէսզի թէ ցխինվալցիք և թէ շրջակայ բնակիչները ազատօրէն կարողանան երթևեկել։

Ձմեռն այս տեղ սկսվում է հոկտ. ամսից ու տեւում մինչև մարտի վերջը, այնպէս որ տարվայ կէս մասը Ցխինվալի փողոցները ծածկված են ձիւնի հաստ շերտով։ Եւ այդքան ժամանակամիջոցում տեղիս երիտասարդներն անխտիր իրանց ոսկի ժամանակը վատնում են գինետներում՝ հարբեցողութեան ու թղթախաղի մէջ, իսկ կանայք գիշերվայ մինչև ժամը 12—1-ը անտէր անտիրական թողած իրանց գերդաստանը, ընկած տնէ տուն՝ «լօտօ», «ցիկա» և «վերտուշկա» են խաղում, առանց ի նկատի առնելու այն հանգամանքը, որ իրանց օրօրոցի երեխան լացից տրաքվում, մեռնում է։ Այդպիսի բարոյապէս անկման շնորհիւ է, որ այստեղ օրէ-օր սունկի նման բազմանում են գինեխանութները. առայժմ հաշւելով մօտ 39 գինետուն կայ. մինչև տարվայ վերջը այդ թիւը երևի կը կրկնապատկվի։ Ծիծաղ որ զարմանալի է. մօտ 1,800 բնակիչ ունեցող Ցխինվալը չունի մի գր.-ընթերցարան, մինչդեռ դրա դէմ կայ 39 գինեխանութ... Յովհ. Դաւթեանց

ԵՒԼԱԽ-ՇՈՒՇԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳԾԻ ԱՌԻԹՈՎ

Բագու, 22 նոյեմբերի

Լրագիրներից արդէն պարզված է, որ Բագուի վաճառական և նաւթարդիւնաբերող շուշեցի Մ. Մ. Սարուխանեանը հաղորդակցութեան մինիստրութիւնից լիազօրութիւն է ստացել Եւլախից Շուշի երկաթուղու գիծ անցկացնելու։

Երկաթուղին էլեքտրական չէ լինելու, ինչպէս «Մշակի» վերջին համարում Բարխացակամն էր գրել, այլ իսկական երկաթուղի։

Բարեխացակամը կոչ է անում շուշեցիներին շտապել գնելու ակցիաները, որպէսզի եւրոպացու ձեռք չանցնի կառուցման և շահագործման գործը։

Ի լրումն յօդուածագրի՝ կարևոր եմ համարում մատնանշել այն օգուտները, որից, եւրոպացու ձեռքը անցնելուց յետոյ, պիտի զրկվեն շուշեցիները ընդհանրապէս, իսկ կովկասեան ազգաբնակութիւնը մասնաւորապէս։

Այդ երկաթուղու գիծը պատրաստելը և այլ ծախսերը, ինչպէս նախատեսված ծախսերը ցոյց են տալիս, 1,500,000 ր. է։ Այդ գումարի կէսը, այսինքն 750,000 ր., անշուշտ ինվենտար կը կազմէ, իսկ մնացեալ գումարը պիտի ցրվի գլխաւորապէս շուշեցիների մէջ։ Ահա թէ ինչպէս. եթէ կառուցման գործը, այսինքն ակցիաները, շուշեցիք սկսեն գնել, բնականաբար ծառայողները, գործակատարները, վերահսկիչները, ճարտարապետները և այլն պիտի տեղացիներ լինեն, որոնք և պիտի ստանան ռոճիկներ, իսկ եւրոպացու ձեռք անցնելուց յետոյ, ինչպէս հէնց Բալախանու շատ նաւթահանքեր անցնելուց յետոյ տեսանք, եւրոպացին—անգլիացի ֆրանսիացի, գերմանացի, բելգիացի և այլն—տեղացի գործակատարներ, հաշւապահներ, ճարտարապետներ, վերահսկիչներ և այլն չէ ընդունելու և խրայիններին է հրաւիրելու։ Տեղացին եւրոպացու ձեռքի տակ միայն և միմիայն բանւոր է լինելու, որին հէնց, կարծես, ուժանի էլ է...

Այդ դեռ առաջին քայլը, մինչև գծի վերջանալը. իսկ յետո՞... յետոյ էլ՝ որքան կայարանների աչքի ընկնող պաշտօնեաներ կան, կարգադրիչներ, սկսած կոնդուկտորից մինչև գլխաւորը, դարձեալ եւրոպացիք են լինելու, ինչպէս նաև մեքենավարները։ Ուրեմն այստեղ տեղացիներին, մանաւանդ հայերին, մնում է «նասիլշչիկի» պաշտօնը, իսկ թուրքերին՝ կայարանների առաջ միրգ ծախելու իրաւունք...

Սարուխանեանը հազարներ ծախսելով իրաւունք ձեռք բերէ, իրաւունք, որը հէնց եւրոպացիներին շատ դէպքում չէ աջողվում... Սարուխանեան միմիայն մի նպատակ ունենայ՝ չարքաշ տանջանքներից ազատել շուշեցիներին, գանգեզուրցիներին, բայց այդ վերջիններիս անփութութեան պատճառով գործի գլուխ անցնի շարունակ մեզ շահագործել սիրող կապալառու եւրոպացին...

Մի բան, որ մեզ համար լուսնի պէս պարզ է, այդ այն է, որ մէկ և կէս միլիոն րուբլին միմիայն բազուարնակ շուշեցի հայերը երեք օրվայ ընթացքում կը ժողովեն և ակցիաները կը ստանան։ Բայց միթէ մենակ հայերը. կան շուշեցի թուրքեր և վերջապէս կան շահագրգռվածներ (օտար քաղաքացիներ), որոնք սպասում են շուշեցիների շարժմանը, որպէսզի իրանք էլ իրանց բաժին ակցիաները ձեռք բերեն։

Սարուխանեան հէնց այդպիսի նպատակ էլ ունեցել է. նա ակցիան 300—500 ր. չէ գնահատել, այլ 50 րուբլի, որպէսզի շուշեցի աղքատն էլ կարողանայ օգտվել, մանաւանդ որ այդ գիծը կարող է 40 տոկոս շահ տալ։

Բայց ի՞նչ ենք տեսնում այսօր... Եւրոպացիները Սարուխանեանի դուռը սրբատեղի են շինել, բախում են դուռը, օգուտներ են առաջարկում, կոմբինացիայի դիմում, բայց Սարուխանեան, հաւատարիմ իր ծննդավայրի շահերին և ազգայ զարգացմանը, խոյս է տալիս օտարներից և պինդ նստում, ինչպէս Թիֆլսական հաւը, ակցիաների վրա, սպասելով որ մի օր էլ շուշեցիք և գանգեզուրցիք կը բախեն իր դուռը։ Սակայն, ըստ երևոյթին, վերջիններս համ խուլ են, համ էլ համր։

Բագւում առնուազն կը գտնվեն 200 շուշեցի 50,000 ր. կարողութիւն ունեցող, 100 շուշ. 100,000 ր. ունեցող, 50 շուշ. 200—300 հազար, իսկ 8—10-ը միլիոնատէրներ։ Այժմ ընթերցող, իրաւունք չունի՞նք ասելու, որ գործը խանգարում է միմիայն հայի սև նախանձը... Նախանձ, որը մի անգամ էլ ծովի յատակը պիտի տանէ մեզ։

Ակամայ մտածում ենք, որ, որովհետև Սարուխանեանին է աջողվել թոյլտւութիւն ստանալ և ոչ Մարկոսեանին կամ Կիրակոսեանին, ուստի ժողովրդական, մասսայական փառքը պիտի վայելէ Սարուխանեանը։

Այլ կերպ էլ մտածել չենք կարող, որովհետև փաստերը ակներև են. դրամ կայ, երկաթուղու կարիքը խիստ զգալի, ապագայ օգուտը պարզ, ակցիան՝ ջրի գին։ Ուրեմն ի՞նչն է կասեցնում շուշեցիներին...

Սարուխանեանի համար միևնոյնն է. նա իր օգուտը կրկնապատիկ ստանալու է, բայց օգտվեցէք և դուք և ձեր գիւղի կամ տան վրա օտար իշխող մի հրաւիրեք։

Այդ էր մեր խօսքը շուշեցիներին և գանգեզուրցիներին. այդ է և մեր համեստ խորհուրդը։ Ս. Գարագաշ

ՀԱՅ-ՎՐԱԿԱՆ ՖԻԼՈԼՕԳԻԱՅԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ասիական ժողովուրդների գրականութեան և պատմութեան վերաբերմամբ Գիտութիւնների Կայսերական Ակադէմիայի ադիւնկտ՝ Ն. Մառը մի զեկուցում ներկայացրեց ակադեմիայի կօնֆերենցիային, որի մէջ մատնացոյց արեց, որ ներկայումս ասիական ժողովուրդների գրականութեան և պատմութեան մէջ հերթական է եաֆեթական լեզուների բարբառներին վերաբերեալ նիւթերի ժողովումը, որոնց ուսումնասիրութիւնն սկսում է հետաքրքրել գիտնականների լայն շրջանները։ Նախ և առաջ վերոյիշեալ լեզուներով հետաքրքրվում են այն գիտնականները, որոնք կը կամենային ստանալ մի քանի չը ճանաչված մեռած լեզուների բանալին այն է՝ Արևելքում Վանի և սուզեան սեպաձև, Արևմուտքում էտրուսեան լեզուները և այլն։ Միևնոյն ժամանակ Ն. Մառը հական անհրաժեշտութիւն է համարում մի շարք լեզուաբանական, հնագիտական և ֆիլօլօգիական բնաւորութիւն ունեցող հարցերի մշակութիւնը հարուստ նիւթերի, իրական և գրաւոր հարուստ նիւթերի հիման վրա, որոնք պարունակվում են Վրաստանի և Հայաստանի հնութիւններ րի մէջ, մանաւանդ այդ նիւթերը յափշտակիչ կեղծ-գիտական շահագործութիւնից ազատելու համար։ Ի նկատի ունենալով պրօֆ. Մառի, նոյնպէս և կովկասեան մասնագէտների, Տակայշվիլիի, Դիրրի, Լոլաչեանի, Էջմիածնի միաբանութեան գիտնական անդամների և այլ անձերի խորհրդածութիւնները այդ հարցի վերաբերմամբ, հարց յարուցվեց կազմել Թիֆլիսում, մօտաւորապէս 1910 թւի յունիսի առաջին թւերին, հայ-վրացական ֆիլօլօգիայի աշխատաւորների համաժողով։ Այդ գործի ձեռնարկողները այդ համաժողով կազմելու գլխաւոր շարժառիթը համարում են գիտական սերտ շփման պահանջը կազմակերպելու համար համաչափ և համակարգված գիտական գործունէութիւն։ Համաժողովներին մտադրութիւն կայ պարզել հերթական բնաւորութիւն ունեցող գիտական խնդիրներ, երևան հանել գաւառական արևելագիտութեան կարիքները, որոշել ոյժեր՝ այս կամ այն խնդիրները ի կատար ածելու համար և միջոցներ մշակել բուժելու համար հական գիտական կարիքները։ Համաժողովի աշխատանքները բաժանված կը լինեն ընդհանուր ժողովի և երեք սեկցիաների միջև, այն է՝ լեզուաբանական, պատմա-գրականական և պատմական, որոնց մէջ կը մտնեն նոյնպէս ազգագրութիւնը և հնագիտութիւնը։ Մտադրութիւն կայ առաջին համաժողովին տալ գլխաւորապէս կազմակերպիչ բնաւորութիւն. զեկուցումները նրա մէջ պէտք է ըստ կարելւոյն սկզբունքային բնաւորութիւն ունենան։

Ներկայումս, Մառի յայտարարութեան համաձայն, արդէն կան առաջին համագումարի համար մօտ հարիւր անձինք, նոյնպէս և ընտրված է համագումարը պատրաստելու համար ժամանակաւոր կոմիտէտ, որ պատրաստ է ձեռնարկել աշխատութեան՝ հէնց որ Կայսերական Ակադեմիան կը տայ իր համաձայնութիւնը՝ այդ գործը իր հովանաւորութեան ներքոյ ընդունելու։

Գիտութեանց Կայսերական Ակադեմիայի կօնֆերենցիան, ընդունելով իր կողմից՝ հայ-վրական լեզուագիտութեան գործիչների ծրագրված համագումարը չափազանց ցանկալի, որոշել է առնել համագումարը գիտութեանց ճեմարանի հովանաւորութեան ներքոյ, բայց այն պայմանով, որ համագումարի կազմակերպութիւնը յանձնվի ակադեմիայի ադիւնկտ Ն. Ե. Մառին։

Ուստի և Գիտութեանց Ակադեմիան դիմեց Նորին Կայս. Մեծութեան Կովկասի Փոխարքային, խնդրանօք՝ թոյլատրել հայ-վրական ֆիլօլօգիայի գործիչների համագումարը Թիֆլիսում նոյն 1910 թւի յունիսի առաջին օրերում, Կայսերական Ակադեմիայի հաստատած հիմունքներով։

Ներկայումս ծրագրված է մօտաւորապէս և այն հարցերի ցուցակը, որոնք կարող են լինել համագումարի քննութեան առարկայ, այն է՝ հաւաքումն արձանագրութիւնների. հնագիտական կօթողների նկարագրութիւնը և լուսանկարումը. տեղական աշխարհագրական անունների նշանակումը. ձեռագիրների ժողովածուի նկարագրութիւնը. ընտանեկան արխիւները Վրաստանում. իրաւունքի պատմութիւնը. սովորոյթային իրաւունքը. վրաց եկեղեցական գրականութեան յիշատակարանների հրատարակութիւնը. հայոց և վրաց Աստուածաշնչի հրատարակութիւնը. վրաց աշխարհիկ գրականութեան յիշատակարանների հրատարակութիւնը. բնագիրների հրատարակութեան ձևերը. ժողովրդական բերանացի գրականութեան յիշատակարանների ժողովումը. բարբառներին վերաբերեալ նիւթերի արձանագրումը եաֆեթական լեզուների համեմատ (վրացական և նրա ազգակից լեզուների). գիտական արշաւանքներ դէպի Աթօն, Երուսաղէմ և Թիւրքահայաստան. հայ-վրացական լեզուագիտութեան ընդհանուր օրգանը. պարբերական համաժողովների կազմակերպութիւնը. աղանդների մասին Հայաստանում. վանքային կազմակերպութիւնը հին Յունաստանում. Ս. Գրքի հին թարգմանութիւնների մասին վրացերէն և հայերէն լեզուներով. հայագէտների և վրացագէտների անելիքները սեպաձև գրութիւնների չը ճանաչված լեզուների վերաբերմամբ. կլասիքական Կովկասը. հայ և վրաց-բիւզանդական յարաբերութիւնները. պարսկական աղբիւրները Վրաստանի և Հայաստանի պատմութեան վերաբերմամբ։ Այս ցուցակը չէ պարունակում իր մէջ այն թեմաները, որ կարող են դեռ անկախ կերպով արձանագրել իրանց նախագծվող համաժողովի անդամները։

(«Кавк.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ *)

Պետերբուրգ, 25 նոյեմբերի

Նիստը վերսկսվում է ժամը 9 և 8 րոպէին։ Նախագահում է Խոմեակօվը։

Ներկայ է արդարադատութեան մինիստրը։

Լիւցը զեկուցանում է արդարադատութեան մինիստրին ուղղված հարցապնդման հիմնական կէտերը բանտային վարչութեան գլխաւոր կառավարչի հրատարակած հրահանգ կարգադրութեան առիթով 1908 թ. ունվարի 18-ից, որով պաշտպաններին արգելվում է, ի խախտումն քրէական դատավարութեան կանոնադրութեան 569-րդ յօդուածի և դատական հաստատութիւնների կանոնագրքի 368-րդ յօդուածի, մուտք ունենալ բանտարկեալների մօտ։

Լուչիցկին իբրև առաջինը ստորագրող պաշտպանում է հարցապնդումը։ Մատնանշելով, որ գլխաւոր կառավարչի հրահանգը բազմաթիւ ցաւալի դէպքերի առիթ ծառայեց, հռետորը կանգ է առնում Կիեվի բանտում տեղի ունեցած մի դէպքի վրա, որը և հիմունք դարձաւ ներկայ հարցապնդումն անելու։

Քուէարկութեամբ հարցապնդումն ընդունվում է։

Արդարադատութեան մինիստրը հանդէս է գալիս պաշտպանելու մինիստրական հրահանգը։ Նա ամենից առաջ հարցին մօտենում է կենցաղական, այսպէս ասած առօրեայ կեանքի տեսակէտից, ասելով որ ամեն մի մարդ իրաւունք ունի դուրս անել իր բնակարանից, յետոյ բոլորովին թոյլ չը տալ, իր հանգիստը խանգարող այցելուին (ծիծաղ)։ Յետոյ մինիստրը կանգ է առնում հարցապնդումի իրաւաբանական կողմի վրա։ Իսկ վերջում նա Դումային ծանօթացնում է ձևական հիմունքների հետ։

Մինիստրի ճառը աջակողմեանները ընդունում են որոտալից ծափահարութեամբ և «բրաւօ» բացագանչութիւններով։

Դուման միաձայն որոշում է անմիջապէս դիմել մինիստրի բացատրութիւնների քննութեանը։

Զեկուցանող Լիւց բացատրում է, որ հարցապնդումների մասնաժողովը իր դատողութիւնների մէջ չը շօշափեց երդուեալ հաւատարմատարների էտիկային և ոչ էլ գլխաւոր բանտային վարչութեան ձեռք առած միջոցների նպատակայարմարութիւնը, մասնաժողովը կանգ առաւ միայն քրէական դատավարութեան կանոնադրութեան 569-րդ յօդուածի խնդրի մտքի վրա և գտաւ, որ բանտային գլխաւոր վարչութեան կառավարչի հրահանգը միանգամայն հակառակ է վերոյիշեալ յօդուածին, ուստի և մասնաժողովը մնում է իր նախկին կարծիքին, գտնելով որ մինիստրը իր բացատրութեան մէջ 569-րդ յօդուածը խախտելու առիթով պատասխան չը տուեց (ծափ. ձախից)։

Սօկոլով II յայտնում է, որ նա երկմտում է, թէ ինչ կապ ունի մինիստրի ամբողջ պատմածը նրան ներկայացված հարցապնդման հետ։ Մինիստրը սուտ ասաց, որ ինչ տեսակ էլ բանաձև ընդունվի, ինքը մինիստրը օրէնքը խախտում է և կը խախտէ ապագայում էլ (ծափ. օպպօզիցիայում)։ Մինիստրի բացատրութիւնները այժմ պէտք է ընդունել ապօրինի (ծափ. օպպօզիցիայում, ուժեղ աղմուկ աջից)։

Հռետորների ցուցակագրելը կրճատելու առաջարկութիւնը չէ ընդունվում։

Պուրիշկևիչը իր պարտքն է համարում շնորհակալութիւն յայտնել արդարադատութեան մինիստրին նրա փայլուն ռուսական հայրենասիրական ճառի համար, որի խօսքերին ի հարկէ կը հետևեն նաև գործերը (աղմուկ ձախից, ծափ. աջից)։

Բուլատը ասում է, որ չարժէ առարկել Պուրիշկևիչին. նրա պաշտպանութիւնը արդարադատութեան մինիստրին միանգամայն բնական է. այդ պաշտպանութիւնը հետևանք է յանցանքի ներման կնոջ վիրաւորանք հասցնելու համար (աղմուկ). Պուրիշկևիչին մի բան միայն կարելի է ասել՝ «Ստիպիր յիմարին աղօթել Աստուծուն, նա ճակատը կը կոտրէ» (ուժեղ աղմուկը խեղդում է հռետորի խօսքերը)։ Բուլատը վերջացնում է. «Երբ այն անձինք, որոնք, իրանց համարելով արքայական ակն, սկսում են անեկդօտներ պատմել, պարզաբար հետևում է, որ ժամանակն է նրանց՝ զիջել իրանց տեղերը աւելի խելահաս մարդկանց» (աղմուկ աջից, ծափ. ձախից)։

Կարաուլովը յայտնում է, որ նա զարմացած է մնացել մինիստրի ճառից։

Մարկով II Պուրիշկևիչի նման հիացած

---

*) Տես «Մշակ» № 263.

է խակական ռուս մարդու՝ արդարադատութեան մինիստրի ճառից։

Որոշվում է վիճաբանութիւնները շարունակել գալիք անգամ։ (Հ. Գ.)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Դումայում մեծամասնութիւն կազմող «հոկտեմբերեանները» սկսում են բացարձակ տրտնջալ իրանց կուսակցութեան մարդկանց և իրանց ընտրած նախագահ Ն. Ա. Խոմեակովի վրա—թէ ինչու է նա մասնաւոր խօսակցութիւններում երբեմն հեգնօրէն վերաբերվում դէպի Դուման, նրա «վերմիշելեան» աշխատանքը, որ նա՝ մանրունքի ետևից ընկած՝ չէ պարապում խոշոր խնդիրներով։ Մինչդեռ հոկտեմբերեանները կուզենային, որ իրանց անունով մկրտված Դուման աշխատընդունակ հռչակվէր, հեռատես, պետական տեսակէտով օժտված և այլն։ Եւ ահա թէ՝ Ա. Ի. Գուչկովի բերան «Гол. Москвы» թերթը, անշուշտ «ներշնչված», ինչ մեղադրանքներով է ասպարէզ դուրս գալիս Ն. Ա. Խոմեակովի դէմ։

«Դումայի հոկտեմբերեան խմբակցութեան մէջ օրէ-օր աճում է Ն. Ա. Խոմեակովի դէմ անբաւականութիւնը։ Նրա մեծամասնութիւնը դատապարտում է այն տարօրինակ վարմունքը, որ ցոյց է տալիս վերջին ժամանակներս Ն. Ա. Խոմեակովը դէպի Դուման։ Եւ սրանից էլ առաջ նա իրան թոյլատրում էր լրագրողների հետ խօսակցելիս գործածել հանաքաւոր, ոչ լուրջ տոն դէպի բարձր օրէնսդրական հիմնարկութիւնը։ Դա նրան ներվում էր նրա bon enfant հռչակի համար։

«Բայց վերջին ժամանակներս Ն. Խոմեակովը օրագրողների հետ զրուցելիս սկսել է թոյլատրել իրան շատ կտրուկ, թէև բոլորովին անհիմն, կարծիքներ յայտնել Դումայի մասին։ Օրինակ՝ նա Դումային մեղադրում է ինիցիատիվի—ձեռներէցութեան պակասութեան մէջ, իր դէպի աշխատանքը հաւատով չը վերաբերվելու, ստեղծագործութեան բացակայութեան մէջ և այլն։

«Չափազանց տարօրինակ տպաւորութիւն են թողնում նման մեղադրանքներ, երբ դրանք լսվում են Պետական Դումայի նախագահի բերանից, որը այս դէպքում անշուշտ մոռանում է, որ ինքն էլ Դումայի կազմումն է և որ իրան արգելված չէ ցոյց տալ «ինիցիատիվ» և «ստեղծագործութիւն» կամ «հաւատալ դումայական աշխատանքի հետևանքներին»։ Միաժամանակ հոկտեմբերեանները մատնանշում են այն հանգամանքը, որ Խոմեակովը իւրացնելով խիստ դատաւորի դերը դէպի Դուման՝ չափազանց թոյլ է սկսել վերաբերվել իր նախագահական պարտականութիւններին։

«Յաճախ է պատահում նրան բազմել նախագահական աթոռի վրա առանց նեղութիւն կրելու ծանօթանալու հերթական հարցերի հետ։ Մի ամսից աւել է, ինչ նա չէ հրաւիրում մասնաժողովների նախագահներին աւագների ժողովին, թէև վճռված էր, որ այդ ժողովները լինեն ամեն երկու շաբաթ։ Նիստերի ժամանակ Խոմեակովը իւրացրել է մի շատ հանգիստ, բայց հազիւ թէ արդարացի կրաւորական դեր, կարծես կողմնակի մի մարդ լինի, և շնորհիւ այդ հանգամանքի անդեկ վիճաբանութիւնները անվերջ ձգձգվում են, առանց որևէ օգուտի»։

Ահա ընդհանուր գծերով այն մեղադրանքները, որոնք ուղղվում են Խոմեակովին իր ընկերակիցների կողմից»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Տեղի սղութեան պատճառով յետաձգեցինք Ա. Քալանթարի յօբելեանի առիթով ստացված հեռագիրները վաղվայ համարին, որը բաղկացած կը լինի մէկ և կէս թերթից։

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է արդէն Հ. Առաքելեանին հրատարակել 1910 թ.. յունվարից հայերէն մի նոր ամսագիր «Արօր» անունով՝ ընդհանուր-գրականական, գեղարուեստական և գիտական բովանդակութեամբ։ Ամսագրի տարեկան գինը լինելու է 6 րուբլի։ «Մշակի» խմբագրութեան հետ կայացրած համաձայնութեան հիման վրա, «Մշակի» բաժանորդների համար բաժանորդագինը լինելու է միայն երեք րուբլի։ Ամսագիրը լինելու է անկուսակցական, բայց անպայման առաջադիմական ուղղութեամբ։ Նա ունենալու է առանձին խմբագրական կազմ, որի մասին կը յայտարարվի առանձին։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 7½-ին, Կ. Հ. Բարեգ. Ընկ. դահլիճում նշանակված է խորհրդակցական ժողով քննելու համար մի շարք հարցեր, որոնք կապ ունեն հայ բեմի գոյութեան հետ։ Խորհրդակցութեան կը մասնակցեն վարչութեան կողմից առանձնապէս հրաւիրված անձինք։

◆ Ինչպէս երևում է Թիֆլիսի օդաբանական կայարանի հեռագիրներից, Երևանում և Շուշում ցրտերը սկսվել են։ Անդրկովկասի մնացած մարդաբնակ տեղերում տիրում է մեղմ եղանակ։

◆ Զուբալովեան ժողովրդական տան պահպանման համար Թիֆլիս քաղաքի 1910 թ. ելմտի մէջ մուծված է 24,560 րուբլի։

◆ Ուրբաթ երեկոյեան Արտիստական Ընկերութեան վերին դահլիճում Ալ. Խատիսեան կարդաց իր դասախօսութիւնը Լէօնիդ Անդրէևի վերջին գրուածքների (Անֆիսա և Անաթէմա պիէսների) մասին։ Դասախօսութիւնը գրաւել էր ունկնդիրների, մանաւանդ ունկնդրուհիների՝ ահագին բազմութիւն։ Այսօր նոյն դասախօսութիւնը կը կրկնվի Հասարակական կլուբում, բօրսայի դահլիճում, որ գտնվում է Միջին-Փողոցի վրա։

◆ Մեր հին ուսուցիչներից մէկը՝ Բունիաթեան, ներկայումս գտնվում է անապահով վիճակի մէջ։ Անցեալ տարի մրսելուց նա կորցրել է լսողութիւնը և ծանր է լսում. Երեսուն տարի աշխատելուց յետոյ հայ ուսուցիչը մնացել է առանց ապահովութեան և օգնութեան։ Ուսուցիչ է եղել նա թէ գիւղերում և թէ քաղաքներում։ Ցանկալի է, որ հին մանկավարժի համար գտնվէին հոգատար մարդիկ։ Ծանր է հայ ուսուցչի դրութիւնը, որը չէ տեսնում միջոցներ ծերութեան օրերի համար։ Հայ ուսուցիչը չունի կենսաթոշակ և մեր հիմնարկութիւններն էլ չունեն գումարներ այդպիսիներին օգնելու համար։

◆ Վաղը, կիրակի, ցերեկվայ ժամը 12-ին Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցում կայանալու է հանդէս, ուր նախկին հոգաբարձութիւնը ներկայացնելու է դպրոցի տնտեսական և ուսումնական մասի հաշւետուութիւնը։ Դեկտեմբերի 1-ից պաշտօնի մէջ է մտնելու նորահաստատ հոգաբարձութիւնը։

◆ Նոյեմբերի 20-ին Մոսկվայի համալսարանին կից իշխ. Ի. Ճավճավաձէի անուան վրաց կուլտուրայի սիրողների շրջանը կազմել է մի գրական-երաժշտական երեկոյթ՝ ի յիշատակ Ի. Ճավճավաձէի։ Զեկուցումներ են կարդացել պրիվ.-դոցենտ Ա. Խախանովը, ուսանողներ՝ Գանիեվը, Ժորդանիան և Լագիդձէն։ Ապա եղել են համերգ և հանգուցեալ գրողի գրուածքներից ընթերցումներ։

◆ Ֆինանսների մինիստրութեան մէջ մի յանձնաժողով պարապված է արևելեան լեզուների ուսման տարածման հարցով։ Դա կարևոր է համարվում առևտրական տեսակէտից։ Ի միջի այլոց սահմանակից առևտրական դպրոցներում մտադրութիւն կայ մտցնել այդ լեզուների դասաւանդութիւնը։

◆ Մինիստրների խորհուրդը որոշել է բաց թողնել Թուրքեստանի գեներալ-նահանգապետութեանը 183 հազար րուբլի մորեխի դէմ կռւելու համար։ Ըստ տեղական հետազօտութիւնների՝ մորեխը ձու է դրել շուրջ 83 հազար դեսեատինի վրա։

◆ Թիֆլիս է եկել բժիշկ Բուձինսկին միջնորդելու, որ թոյլատրվի կուրորտ հաստատել Անապայում ծովային լողարաններով և խաղողով բուժելու համար։ Այս միջնորդութիւնը երկրագործութեան գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօրը համակրանքով է ընդունել։

◆ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան լիազօրութեամբ Թիֆլիսի գաւառական պարագլուխ իշխ. Թումանովը նոյեմբերի 25-ի երեկոյեան մեկնեց Պետերբուրգ՝ միջնորդելու ուր հարկն է, որպէս զի թոյլատրվի վրաց ազնուականութեանը կառուցանել Կախեթեան լայնուղի երկաթուղի նեղուղու փոխարէն։

◆ Թիֆլիսի արհեստաւորաց վարչութեան մէջ մշակվում է մի նախագիծ հիւանդանոց հաստատելու արհեստաւորների և նրանց ընտանիքների համար։ Միաժամանակ նախագծվում է սահմանել հիւանդանոցային տուրք արհեստաւորների մէջ հիւանդանոցի պահպանութեան համար։

◆ Գիւղատնտես Մեձըխովսկին վերջերս ներկայացրեց Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեանը 1909 թ. բերքի գետնախնձորի տեսակները, որ նա ցանել է Ելենովկայի փորձնական բանջարանոցում։ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը, ցանկանալով գիւղատնտեսների մէջ տարածել լաւ յատկութեան գետնախնձոր, բաց է թողնում ցանկացողներին այդ գետնախնձորի տեսակները 10 փութը 75 կոպէկով։

◆ Այսօր Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան դահլիճներում տեղի կունենայ երեկոյթ յօգուտ Զմիւռնիայի և Պալեստինի հրէայ երկրագործներին և արհեստաւորներին փոխադարձաբար օգնող ընկերութեան։ Երեկոյթը լինելու է ազգային ճաշակով։

◆ Այսօր Զուբալովեան ժողովրդական տանը դերասան Սևումեանի բենեֆիսն է։ Թատերասէրների խումբը կը խաղայ «Ուրիէլ-Ակօստան»։ Բոլոր տոմսակները վաճառված են։

◆ Նոյեմբերի 26-ին V քաղաքամասի ոստիկանութիւնը ձերբակալեց 39 անգործ և անանցաթուղթ մարդկանց։

◆ Այսօր տեղի կունենայ Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան հերթական նիստը երեկ.. ժամը 8-ին։

◆ Կովկասեան Կայսերական Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ այսօր՝ վրացերէն, ց. ժ. 4—5-ը, տ. Քարթվելովը երեխաների համար կը կարդայ «Կարմիր Գլխարկ»։ Ժամը 5—6-ը տ. Ասատիանին՝ պատանիների համար՝ «Աւեծ-մարդ»։ Վաղը՝ կիրակի, տ. Դիլանեան հայերէն, ժ. 11—12-ը, «Թաւամազ մեղուի հէքիաթը»։ Տիկ. № № ռուսերէն, ժ. 12—1-ը, «Сказка о принцессы Лили-Розѣ»։ Հասակաւորների համար «Մարդու ֆիզիօլոգիայի և անատոմիայի մասին» բժ. Դամբաշիձէն վրացերէն, երեկ. ժամը 5—6-ը, և բժ. Ն. Խատիսեան ռուսերէն՝ ժ. 6—7-ը։

◆ Ի նկատի ունենալով որ Ալէքսանդրօպոլի գաւառում ժանտախտ է երևացել եղջերաւոր անասունների մէջ, Բօրչալուի գաւառապետը կտրական միջոցներ է ձեռք առել անասունները Երևանի նահանգից Բօրչալուի գաւառը փոխադրելու առաջն առնելու համար։

◆ Գեօկչայից «Т. Л.»-ին գրում են. «Նոյեմբերի 17-ին այստեղ սպանվեց պանդուխտը՝ Թիֆլիսի գեներալ-նահանգապետութեան սահմաններից աքսորված՝ Ս. Աւետիքեանը։ Սպանութիւնից առաջ նրա և Կարապետ Ասլանեանի միջև տեղի ունեցաւ վէճ հասարակ պատճառով, և ահա նոյեմբ. 17-ին, երեկ. ժամը 5-ին, Աւետիքեանին կանչեցին փողոց։ Մարդասպանը սուր դանակը խրեց նրա փորը և մի քանի անգամ փորում խաղացրեց, որից յետոյ դիմեց փախուստի, բայց բռնվեց պահակների ձեռքով։ Հանգուցեալի մահից յետոյ մնաց մի ամբողջ ընտանիք»։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Նոյեմբերի 19-ին Կօվնօյում բացվեց հրէական հասարակական գործիչների համագումարը։ Եկել են մօտ 50 գործիչներ, թէ հրէաներով բնակեցված նահանգներից թէ ներքին Ռուսաստանից։ Առաջին ժողովը բացին տեղական ականաւոր աւագները. ապա առաջին նիստի նախագահ ընտրվեց Մ. Մ. Վինավերը, երեւելի ռուս փաստաբան-հռետորը և առաջին Դումայի անդամը։ Նախագահը իր ճառում ընդգծեց այն հետաքրքրութիւնը, որ արտայայտեց հրէական ազգաբնակչութիւնը դէպի համաժողովը և համայնական կազմակերպութեան քննելիք հիմնական հարցերի լրջութիւնը, հրաւիրելով բոլոր մասնակիցներին միանալ ընդհանուր աշխատանքի շուրջը։ Նրանից յետոյ երդ.-հաւատարմատար Սլիօզբերգը—նոյնպէս անուանի փաստաբան-հրապարակախօս և գիտնական—կարդաց մի զեկուցում հրէական համայնքի րէֆօրմի մասին, րէֆօրմ, որ դրված է բոլոր հրէաների համայնքային գործերի պարտաւորական մասնակցութեան սկզբունքի վրա՝ պարտաւորական եկամտային հարկատուութեամբ։

◆ «Гол. Москвы» թերթին հեռագրում են Կիևից, որ, գործադրելով առևտրի մինիստրի նոր շրջաբերականը, որով հրեայ աշակերտների թիւը 10%-ից աւել չը պիտի լինի, նախկին 50%-ի տեղ, շրջանում փակվում են 25 առևտրական դպրոցներ 8000 աշակերտներով, որովհետև միակ քրիստոնեայ աշակերտները բաւ չեն ուսումնարանների պահպանման համար։

◆ Պետական բանկի օգնութեամբ բացվող վարկային ընկերութիւնների թիւը Ռուսաստանում օրէ-օր աճում է։ Միայն վերջին ամսվայ ընթացքում Ելիսաւետգրադի գաւառում բացվել են 15 նոր վարկային ընկերութիւններ։ Դրանց թիւը յիշեալ գաւառում հաւասար է 90-ի. գրեթէ ամեն գիւղական հասարակութիւն ունի իր փոքրիկ բանկը։

◆ Պետերբուրգի քաղաքային ընտրութիւնների երկրորդ կուրիայում փայլուն յաղթութիւն տարաւ առաջադիմական խմբակցութիւնը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, նոյեմբերի 26-ին, Ռուսաց Դրամատիքական խումբը, գանձապահուհի Տէրպուգօվայի բենեֆիսին ներկայացրեց Վ. Պրոտոպոպովայի կոմէդիան՝ «Աստղ բարոյականութեան» անունով։ Այդ կոմէդիայի մէջ դուրս են բերված բարեգործութեան լարախաղացները և ապետները։ Դուրս է բերված և մի հայ կրեսոսի տիպը, որ չը գիտէ ուր փախչել հայ մուրացողների ձեռքից։ Կոմեդիան իբրև կենցաղական բարքերի մի լուսանկար՝ գրված է կենդանի և աշխոյժ ձևով, բայց զուրկ է որևէ լուրջ բովանդակութիւնից։ Հայ կրեսոսի դերը խաղում էր Բարատովը, որ չափից դուրս կոմիքական դարձրեց իր խաղը։

Թատրօնը լի էր։

—

Մերվ, 21 նոյեմբերի

Ամսիս 19-ին տեղիս հասարակական ժողովարանի դահլիճում կայացաւ Պետերբուրգի կայսերական օպերայի պրիմադոննա Մ. Ա. Միխայլովայի (колоратурное сопрано) համերգը, որ գրաւել էր քաղաքիս ինտելիգենտ հասարակութիւնը։ Չը նայած որ տոմսակները սովորականից շատ թանգ էին, բայց և այնպէս սպառվել էին վաղօրօք։ Միխայլովայի ձայնը յստակ էր, սահուն և գողտրիկ։

Համերգին երգում էր և օպերային արտիստ Դժաղիւցան (баритонъ), նուագում էր դաշնամուրի վրա դաշնակահար Բուտենբէրգ, որոնք իրանց հերթին արժանացան ծափահարութիւնների։

Հասարակութիւնը ցրվեց գոհ սրտով, տանելով իր հետ քաղցր տպաւորութիւններ։

Մանասէ

—

Սամարղանդ, 21 նոյեմբերի

Ամսիս 20-ին քաղ. հասարակական թատրօնում տեղիս սիրողների խումբը յօգուտ գաղութիս ծխ. դպրոցի խաղաց Է. Տէր-Գրիգորեանի «Բարեգործութեան դիմակի տակ» դրաման։ Խաղը միջակ անցաւ։

Ներկայացումից յետոյ Մելիքեան մենախօսեց ռուսերէն՝ Չեխովի «Ծխախոտի վնասը»։

Թատրօնը լի էր գաղութի հայ հասարակութեամբ։ Զուտ օգուտ կը մնայ մօտ 150 ր.։

Ղափանցի

—

Վան, 11 նոյեմբերի

Ամսիս 7-ին Կենտրոնական վարժարանի սրահում տրվեց «Օտելլօ» յայտնի դրաման «Ազատ-Բնար» անուն սիրողների խմբի կողմից՝ յօգուտ «Աւետիսեան» գրադարանի։ Նայելով տեղական պայմաններին ու միջավայրին՝ ներկայացումը բաւական աջող անցաւ. սրահը ամբողջ լիքն էր հանդիսատեսներով. ներկայ էր նաև վալի Բէքիր բէգ, որ մինչև վերջ համբերութեամբ լսեց, չը նայելով որ չէր հասկանում ներկայացումի լեզուից։

Տեսարանները, ծովը, որի վրա նաւում էր Օտելլօն, շատ լաւ էին յարմարեցված. սրա համար մեծ ջանք ու աշխատութիւն էր ունեցել յայտնի ոսկերիչ արհեստաւորներից Գէորգ Գույումջիբաշեան, որը ցոյց էր տալիս, թէ տաղանդ ունի և հասկանում է անմահ Շէքսպիրի աշխարհահռչակ դրամայից։ Միհրան Միրաքեան Օտելլօյի և Կարապետ Աճէմեան Եագօյի դերերում ցոյց տուին աջող արժանիք։ Ներկայացումը կրկնվելու է այսօր և առաջիկայ կիրակի, վերջինը յատկապէս կանանց համար, որովհետև Վանում երկսեռ հանդիսատեսների միաժամանակ ներկայութիւնը դեռ անպատեհ է համարվում։

Թատերական սէզօնը սկսվել է արդէն. շուտով կը ներկայացվի նաև «Դաւաճանը» յօգուտ Սանդխտեան վարժարանի։ Ասում են, որ այս օրերը Վան կը հասնի նաև Աբէլեանի խումբը և կը տայ մի շարք ներկայացումներ։ Կը գրեմ ժամանակին սրանց մասին ևս։

Մարակ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 19 նոյեմբերի

Հին Նախիջևանի վաճառական Աւետիս Պօղոսեանը նոյեմբերի 12-ին դիմել է Կ. Հ. Բ. Ը. Խորհրդին հետևեալ նամակով.

«Մի ժողովրդի վերածնութեան և առաջադիմութեան գործում նշանաւոր գործօններից մէկը, նուաստիս կարծիքով ևս, գրականութիւնն է և ընթերցասիրութեան տարածումը։ Մեծ համակրանքով վերաբերվելով այդ վսեմ նպատակին, ես էլ, իբր հասարակութեան մի անդամ, ինձ պարտաւոր եմ համարել ծառայութիւնս մատուցանել այդ գործին և տարիներ առաջ, երբ ես բնակվում էի Մոսկվա առևտրական գործերով, իմ վաստակից նշանակեցի 10,000 ր., որ այդ փողի տոկոսներով հրատարակվեն հայերէն գրքեր թէ օրգինալ և թէ ընտիր թարգմանութիւններ։ Այդ եղանակով արդէն հրատարակված են մի քանի գրքեր, որոնց վրա ծախսված են թէ տոկոսները և թէ մի մասը յիշեալ գումարի, որից այժմ մնացել է 7100 ր. պետական 4% րէնտայով իրանց կուպօններով սկսած 1-ը դեկտ. 1909 թ.։

«Վաղուց մտահոգութեանս առարկան է այն, որ ես յիշեալ գումարը յատկացնում եմ մեր ազգային հաստատութիւններից մէկին, որ նա պահի այդ գումարը և գործադրի իմ նշանակած նպատակի համար նրա տոկոսիքները։

«Լաւ ծանօթանալով Կ. Հ. Բ. Ը. կանոնադրութեան և գործունէութեան հետ, ես որոշեցի իմ գումարը նուիրել այդ Ընկերութեանը, իբր յատուկ և անձեռնմխելի գումար հետևեալ պայմաններով.

«1) Այդ գումարը կազմում է հրատարակչական ֆոնդ և պահվում է անձեռնմխելի։

«2) Նուիրածս գումարի տոկոսները Ընկ. Խորհուրդը գործադրում է հայերէն գլխաւորապէս ժողովրդական գրքերի վրա, թէ օրգինալ (ինքնուրոյն) և թէ թարգմանական, որո՛նց վրա պէտք է յիշվի, որ իմ հրատարակութիւնն է։

«3) Այդ հրատարակութիւնների գործում պէտք է մասնակցեն հետևեալ անձինք ևս. պ. պ. Ղ. Աղայեան, Ալ. Քալանթար, Լ. Սարգսեան և Ռ. Խանազադեան։

«4) Այդ հրատարակութիւնների մասին Խորհուրդը հաշիւ է տալիս ընդհանուր ժողովին, որի մէկ օրինակն էլ յանձնում է ինձ ի տեղեկութիւն։

«5) Թէ որևիցէ ժամանակ Ընկերութիւնը ինչ-ինչ պատճառներով անկարող եղաւ գրքեր հրատարակել, այդ դէպքում իմ նուիրած փողի տոկոսները նա գործադրում է Հին-Նախիջևան քաղաքի հայ հասարակութեան կամ մի հայ աղքատ գիւղի նոյն գաւառի կուլտուրական և կրթական կարիքների վրա, իսկ եթէ Ընկերութիւնը մի որևիցէ ժամանակ դադարեցնի իր գործունէութիւնը, իմ նուիրած գումարը պէտք է յատկացնի Հին Նախիջևանի ս. Գէորգ եկեղեցուն, որ վերջինս, պահելով գումարը անձեռնմխելի, տոկոսիքը գործադրի տեղական հայոց ծխ. դպրոցի վրա, կամ մի այլ կրթական նպատակի համար։

«Բացի այս գումարից, ես նուիրում եմ Բարեգործական Ընկերութեանը և իմ հրատարակած և մինչև օրս չը ծախված բոլոր գրքերը առանձին ցուցակով, գումարով 3489 ր. 45 կ.։ Այդ գրքերի բաժանելը, ծախելը և ստացած գումարների գործադրութիւնը թողնում եմ Խորհրդի բարեհայեցողութեանը։

«Նուիրում եմ և մի առանձին ցուցակով կենտրոնիդ գրադարանի համար 36 գիրք հայերէն լեզուով։

Եթէ Խորհուրդը ընդունէ իմ պայմանները, թող միևնոյն ժամանակ կարգադրէ ընդունել ինձանից թէ նուիրած գումարս և թէ գրքերը»։

Այս նամակը զեկուցվեց ամսիս 18-ին Խորհրդի նիստում, և Ա. Պօղոսեանը ներկայացաւ նոյն նիստին. իմանալով որ Խորհուրդը շնորհակալութեամբ ընդունում է նորա նուէրը, ներկայացրեց 7100 րուբլու րէնտաներ և գրքերի ցուցակը։

Գրքերի մասին Ա. Պօղոսեանը ցանկութիւն յայտնեց, որ այդ գրքերը մասամբ ձրի, մասամբ վճարով յօգուտ Ընկերութեան տարածվեն ճիւղերի միջոցով։

Խորհուրդը միաձայն յայտնեց իր խորին շնորհակալութիւնը Ա. Պօղոսեանին նրա շօշափելի նուէրի առիթով Ընկ. ամենահամակրելի նպատակներից մէկի համար։

Ընկ. Խորհուրդը այդ նուէրի մասին զեկուցանելու է առաջիկայ ընդհանուր ժողովին։

Ընկ. մտադիր է, նաև օգտվելով այս նուէրից, հիմք դնել հրատարակչական ֆոնդի։

Խորհուրդ

—

Թիֆլիս, 26 նոյեմբերի

Թէև «Մշակը» մի քանի անգամ շօշափել է, սակայն օգտվելով դէպքից՝ մենք ուզում ենք մի աւելորդ անգամ ևս յիշեցնել Հայ Դրամատիկ Ընկերութեան վարչութեանը և առ հասարակ հայ բեմի նախանձախնդիր անձանց մի շատ կարևոր խնդիր, որը շարունակ ծեծվում, արծարծվում է, բայց իրագործելու և ոչ մի քայլ չէ առնվում. դա բեմիսեօրի խնդիրն է հայ թատրօնում։ Մեզ թւում է, որ յանձին հայկական սեկցիայի, մենք հնարաւորութիւն ունենք այժմ այդ խնդիրը կիսով չափ լուծված տեսնելու։ Խօսքս Սևումեանի մասին է, որին իբրև բեմիսեօր հրաւիրել է հայկական սեկցիան։ Ճանաչելով Սևումեանին որպէս կրթված, ինտելիգենտ և շնորհալի դերասան, այնուամենայնիւ խոստովանում ենք՝ մենք մեծ կասկածով էինք վերաբերվում դէպի նրա բեմիսեօրական գործունէութիւնը. սակայն մի շարք՝ բաւական բարդ պիէսների ներկայացումները, ինչպէս «Դաւաճանութիւն», «Աւազակներ», «Նկարիչ Թաշճեան», «Խարդաւանք և սէր», «Թագաւոր» և այլն, եկան մեզ ապացուցանելու, որ Սևումեանը շնորհալի դերասան և տաղանդաւոր բեմիսեօր է։ Մոսկվայում նա եղել, սովորել է, բաւական աշխատել է զանազան թերթերի գեղարուեստի բաժիններին, այժմ էլ հրապարակով ապացուցեց իր ընդունակութիւնները թէ որպէս դերասան և թէ որպէս բեմիսեօր. մնում է միայն, որ հայ բեմի նախանձախնդիր անձինք մտածեն մի երկու տարով ապահովել Սևումեանին կրկին Մոսկվա գնալու, աւելի ևս ուսումնասիրելու և ամրապնդվելու. այնուհետև համարձակ կարող ենք ասել, որ հայ բեմը մի երկու տարուց յետոյ կունենայ մի արժանաւոր ղեկավար։ Յիշեցնում ենք, որ շաբաթ, ամսիս 28-ին, Զուբալովի ժողովրդական տանը կայանալու է Սևումեանի բենեֆիսը, աւելի յարմար առիթ այդ գեղեցիկ գործը կատարելու, քան նրա տօնի օրը, դժուար է սպասել։

Ուզում ենք յուսալ, որ Դրամ. Ընկեր. վարչութիւնը և հայկական սեկցիան ձեռք ձեռքի տուած իրանց վրա կառնեն այդ գեղեցիկ գործի ինիցիատիվան։

Մ. Ստամբօլցեան

«ՈՒՄ ԵՆՔ ՏԱԼԻՍ ՄԵՐ ՆՊԱՍՏՆԵՐԸ»

Այսպիսի մի վերնագրով մի յօդուած տպվեց «Սուրհանդակ» թերթի մէջ։

Յօդուածագիր Ա. Երիցեանը կեանքից որոնում է ազգակից հարցեր և աշխատում է նրանց լուծել։ Սակայն իւրաքանչիւր հարց լուծելու համար պահանջվում է ծանօթութիւն այդ հարցի հետ, և, որ գլխաւորն է, կեանքի լուրջ հարցերին լուրջ որոշում և ընթացք տալու համար հարկաւոր է լուրջ պատրաստութիւն։

Համալսարանը և նրա սաներին այդքան ցեխոտելու համար հարկաւոր է նրանց հետ գոնէ փոքր ծանօթութիւն։ Կրթութեան որդոց պախարակելու ու քարկոծելու համար հարկաւոր է կրթութեանը որոշ ծառայութիւն մատուցած լինել։ Նման ձայները կրկնում են, որ այժմ ուսանողութիւնը ընկած է, և Ա. Երիցեանը ամայութեան պէս արձագանք է տալիս ու ընթերցողների մէջ կասկածը փարատելու համար զգուշացնում է, որ դա իր համոզմունքն է։

Խօսելով ընդհանուր բարերարութեան մասին, անցնում է իր մտքի կենտրոնին՝ բարերարութեան այն մասին, որ վերաբերում է ուսանողներին։

Թող խօսէ ինքը.

«Բայց երբ քահանան մուրում է, այդ հասկանալի է. դա ունի իր յայտնի պատճառներն ու պատմութիւնը... (!)։ Երբ ուսուցիչն է մուրում, այդ նոյնպէս հասկանալի է. նա խնդրում է իր ձեռքի տակ գտնված խղճուկ ուսումնարանի համար, մեր որդոց կրթութեան համար։ Դերասանը երբ մուրալով տոմսակ է ծախում, այդ նոյնպէս հասկանալի է, որովհետև դժբաղդաբար մեզանում գեղարուեստն ուրիշ կերպ առաջ տանել անկարելի է լինում...

«Միաժամանակ մուրում են և հայ ուսանողները...»։

Եւ ահա այստեղ ջանք է գործ դնում ցեխոտել ու կեղտոտել բոլոր չքաւոր ուսանողներին և դիպլոմաւորներին։

Լօգիկան այնքան է դաւաճանում նրան, որ նա ապերախտութիւնը, անպարտաճանաչութիւնը, հասարակութեանը ոչ-պիտանի լինելը ընդհանուր օրէնք է դարձնում բոլոր չքաւոր ուսանողների և բարերարութեան միջոցով արդէն դիպլոմ ունեցողների համար և քարոզում է, որ այլևս ոչ մի կոպէկ չը ծախսվի այդ ուսանողների համար։

Ա. Երիցեանը քարոզում է օգնել չքաւոր դերասաններին և ուսուցիչներին, որպէսզի երկուսն էլ հնարաւորութիւն ունենան իրանց բարի գործը կատարելու։

Իդէալիստ պարոն, ես էլ ձեզ հետ միանգամայն համաձայն եմ, որ դրանց հնարաւորութիւն պէտք է տալ ժողովրդի կուլտուրան բարձր պահելու։

Բայց, կարծում եմ, կը խոստովանվիք.

որ ժողովրդի կրթութիւնը բարձրացնելու համար դերասանը ինքն էլ պէտք է կրթուած լինի և «մեր որդոցը» կրթելու համար ուսուցիչն էլ կրթութիւնից զուրկ չը պէտք է լինի. և ահա այդ և դրանց նման պարոններն են, որ ուսանողական սև օրերն անցնելու ժամանակ ստիպուած են լինում դիմել հասարակական բարերարութեանը։

Չեմ ուզում հաւատալ, որ դուք դաւանում էք, թէ հասարակական այս ձևի և սրանց նման գործիչները պէտք է առանց կրթութեան լինեն, և չեմ կարծում, որ դուք այնքան միամիտ լինէք, պ. Երիցեան, որ ենթադրէք, թէ դրանք, անցեալի այդ ուսանողները, կարևոր կրթութեան պաշարով են լոյս աշխարհ գալիս, ծնվում։ Կամ թէ նրանք նիւթապէս բոլորն էլ ապահովուած են լինում իրանց տաղանդը չը թաղելու համար։

Ահա այդ և դրա նման անհրաժեշտ կրթութիւնն է, որ հասարակական կուլտուրան բարձր պահելու համար պահանջւում է հասարակութեան բարերար օգնութիւնը։ Տեսնո՞ւմ էք ուրեմն որ դուք, պ. Երիցեան, ձեր համոզմունքների դէմ էք քարոզում։

Համալսարանի կեանքին ծանօթ մարդը միշտ կը պնդէ, որ հարիւրաւոր ուսանողների մէջ սեփական միջոցներով նիւթապէս ապահովներին կարելի է մատներով հաշւել։ Այդ մեծ կարիքն է, որ իւրաքանչիւր համալսարանական քաղաքում ստեղծել է զանազան ընկերութիւններ, հիմնարկութիւններ, որոնց գլուխն անցել են յայտնի և գիտակցող մարդիկ և աշխատում են չքաւոր ուսանողութիւնը պաշտպանել։ Հայկական կեանքում շատ յաճախ կը պատահէք, որ խղճուկ գիւղացու որդին բաղդի բերմամբ ընկնելով միջնակարգ դպրոցը, օժտուած լինելով արտասովոր ընդունակութիւններով, աջող վերջացնում է այստեղ իր կրթութիւնը և արդէն հասունացած լինելով կարողանում է ցոյց տալ պարզ նշաններ՝ դառնալու հասարակական պիտանի անդամ, ժողովրդական անկեղծ մշակ. սակայն նա միջոց չունի կրթութիւնը շարունակելու. և ահա այս վերջին սպեղանի է դնում Երիցեանը իր դաւանանքով—այսուհետև չքաւոր ուսանողների համար ոչ մի կոպէկ չը ծախսել։

Ծանր է, ասում է Երիցեանը, տեսնել, որ զանազան կտակներ են գրվում ուսանողների օգտին։

Այո, ծանր է և սարսափելի ծանր, բայց ոչ թէ այդ ուրախալի երևոյթը՝ հասարակական կրթութեան մակերևոյթի բարձրանալը տեսնելը, այլ այն, որ հայ դժբաղդ իրականութեան մէջ ասպարէզ են գալիս միանգամայն անպատրաստ մարդիկ և զուտ վաճառականական սկզբունքներով շահագործելով կրթական գործը և խաչ բարձրացնելով կեանքի զանազան կարևոր հարցեր՝ անգիտակցօրէն լոյսից դէպի խաւարն են առաջնորդում։

Վերջացնելով խօսքերս խնդրում եմ Երիցեանին բարի գտնվել արտատպելու պատասխանս իր «Սուրհանդակ» թերթում։

Ուսանող Մ. Զիբուխչեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՌԷՅԽՍՐԱՏՈՒՄ

Ինչպէս հեռագիրներից արդէն յայտնի է, աւստրիական ռէյխսրատի արած հինգ անյետաձգելի հարցապնդումները՝ ազգութիւնների իրաւունքների հաւասարութեան մասին՝ այն հետևանքն ունեցան, որ ռէյխսրատում կազմվեց մի առանձին յանձնաժողով, որին պէտք է ուղարկվեն այն բոլոր օրինագծերը, որոնք վերաբերում են ազգային կռւի շրջանին։

Ռէյխսրատի այդ վճիռը բաւական մեծ նշանակութիւն ունի աւստրիական պարլամենտական ճգնաժամի ներկայ դրութեան մէջ, որովհետև դա, ըստ երևոյթին, նշանակում է, որ կուսակցութիւնները առ այժմ հրաժարվում են օբստրուկցիայից անյետաձգելի հարցապնդումների միջոցով և պարլամենտ այժմ հնարաւորութիւն ունի սկսելու առաջին հերթական օրինագիծը, այսինքն ժամանակաւոր բիւջէտը։ Սակայն դրանով, ի հարկէ, չէ ապահովվում ռէյխսրատի կանոնաւոր աշխատանքն առ հասարակ։ Ոչինչ նոր բան չէին պարունակում և կրկնվում էին արդէն շատ անգամ յայտնված այն բոլոր ճառերը, որոնք արտասանվեցին վիճաբանութիւնների ժամանակ անյետաձգելի հարցապնդումների առիթով։ Ուշադրութեան արժանի է սօցիալ-դեմոկրատ Զէլիգերի ճառը, որը մատնացոյց արեց այն բանի վրա, որ այժմեան դրութիւնը հետևանք է թէ քաղաքացիական և թէ զինւորական բարձր բիւրօկրատիայի գործելակերպի, որը առանց պարլամենտի գործելը աւելի յարմար է համարում իր համար։ Նա ապացուցանում էր, որ գերմանացիները ի զուր են պարլամենտի անգործութեան ամբողջ պատասխանատուութիւնը գցում չեխերի վրա, որոնք խոչընդոտներ են յարուցանում ռէյխսրատում իրանց օբստրուկցիաներով։ «Ժամանակ է վերջապէս,—ասաց հռետորը,—գերմանացիների համար հասկանալ, որ Աւստրիայում չէ կարող պետական կազմը հիմնված լինել այն բանի վրա, որ 9 միլիոն գերմանացիները տիրապետեն 16 միլիոն ոչ-սլաւօն ազգաբնակութեան վրա և որ գերմանացիների ազատութիւնը և իրաւունքները աներևակայելի են առանց ուրիշ աւստրիական ազգութիւնների նոյնպիսի ազատութեան և նոյնպիսի իրաւունքների։ Գերմանացիների օբստրուկցիան չեխական սէյմում խախտեց ռէյխսրատի գործունէութիւնը սօցիալական օրէնսդրութեան շրջանում»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սենատը, քննելով երկրագործութեան գլխաւոր կառավարչի առաջադրութիւնը այն մասին, որ թոյլ տրվի դասաւանդութիւնը Լեհական Թագաւորութեան և Պրիբալտիկ նահանգի գիւղատնտ. դպրոցներում տեղական լեզուներով,—հարցը լուծեց բացասական մտքով։

Ի. գ. խ. բարոն Իսկուլ-Ֆօն-Գիլդէնբանդը խնդրագրի համաձայն արձակվում է Պետական Խորհրդի ստատս-սեկրետարի օգնականի պաշտօնից, որի համար նշանակվում է՝ ի. խ. Բալաբինը։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը մինիստրների խորհրդի մէջ հարց է յարուցում՝ փոխելու աշակերտների համար սահմանված էժանացրած տարիֆը այն մտքով, որ գները պակասեցվեն աւելի, քան ինչպէս ներկայումս է։

Հեռագրաթելերը փչացել են կենտրոնական Ռուսաստանում հետևեալ տեղերում. Պետերբուրգ, Կազան, Սամարա, Սարատով, Ռոստով Դ./վ., Տամբով, Իրկուտսկ, Օմսկ, Մոսկվա, Ցարիցին, Թիֆլիս։

Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամայել բարեհաճեց անհետևանք թողնել ֆինլանդական սենատի առաջադրութիւնը գերագոյն դատարանի օրէնքի մասին։

Մինիստրների խորհրդի մէջ քննվեց միջնակարգ դպրոցի բարենորոգման նախագիծը։ Նախագծի համաձայն մտադրվում է ստեղծել միջնակարգ կրթական հաստատութիւնների մի ընդհանուր տիպ 6-ամեայ դասընթացքով։

ՄՕՍԿՎԱ։ Կաթուածահար եղաւ յայտնի բուսաբան պրոֆեսոր Տիմիրեազևը։

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, վերջին ժամանակներս խօլերայով հիւանդացան 47 հոգի։ Ներկայումս կան 52 հիւանդներ։

ԳԻԲՐԱԼՏԱՐ։ Անգլիական «Դօնէգալ» ականանաւը ընդհարվեց «Մալագա» շոգենաւի հետ և խարիսխ ձգեց։

ԲԵՐԼԻՆ։ Լեհական ֆրակցիան ռէյխստագին ներկայացրեց մի շարք օրինագծեր, ի թիւս որոց այն մասին, թէ անհրաժեշտ է կանոնաւորել Գերմանիայի սահմաններում ապրող օտարազգիների բնակութեան հարցը, ադմինիստրատիվ կարգով ռուսներին և աւստրիացիներին աքսորելու խնդիրը և այլն։

ՎԻԵՆՆԱ։ Դատարանում երդուեալ դատաւորների մասնակցութեամբ սկսվեց պատմաբան բժիշկ Ֆրիդինգի և «Րէյխս-Պօստի» պատասխանատու խմբագիր Ամբրօսի գործը, որոնք 50 խորվաթ պատգամաւորներից մեղադրվում են զրպարտութեան մէջ։ Ամբաստանեալներին մեղադրում են պետական դաւաճանութեանը մասնակցելու և Սերբիայից կաշառվելու մէջ։ Դատարան եկան մեղադրողները, 23 պատգամաւորներ, կոալիցիայի նախագահ Տուսկան, նրա հիմնադիր Սուպիլօն, սերբական կուսակցութեան պարագլուխ Մէդակօվիչ, զագրեբեան գործի գլխաւոր պաշտպանները։

ԼՕՆԴՕՆ։ Գիշերս կողոպտիչները մտան Պօսվէլ փողոցում պօստային բաժանմունքը և յափշտակեցին փողի պահարանը, որի մէջ կային 1329 ֆունտ դրամ, պօստային փոխանակագրեր և զանազան արժէքաւոր իրեր։ Ոստիկանութիւնը հետևեց կողոպտիչներին, հասաւ 7 հոգուն, ձերբակալեց նրանց և խլեց պահարանը։

ԲԻՍՄԱՐԿՍՀԻՒՏԷ (Սիլեզիա)։ Գիշերս կոտրեցին հասարակական գանձարկղը և յափշտակեցին 24,000 մարկ կանխիկ և 96,000 մարկի զանազան արժեթղթեր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժեթղթերի կուրսերը

27 նոյեմբերի

1 կ. ներք. փոխ. խ. տոմս.	464 ր.	— կ.
II » » »	346 ր.	50 կ.
III Ազնուակ. բանկ. »	306 ր.	— կ.
$4^0/_0$ Պետական ռենտա	90 ր.	— կ.
$4^0/_0$ Պետ. Ազնւ. բանկ գր. թ.	96 ր.	87 կ.
$5^1/_2{}^0/_0$ » » » »	— ր.	— կ.
$4^0/_0$ » » » »	— ր.	— կ.
$3^1/_2{}^0/_0$ » » » »	— ր.	— կ.
$5^0/_0$ Գիւղ. հող. բան. վկ.	— ր.	— կ.
$5^1/_2{}^0/_0$ » » » »	— ր.	— կ.
$4^0/_0$ » » » »	— ր.	— կ.
$5^0/_0$ Ներքին փոխառ. 1905 թ. I հրատ.	101 ր.	— կ.
$5^0/_0$ » II հրատ.	101 ր.	— կ.
$5^0/_0$ Արտաք. » 1906 »	102 ր.	— կ.
$5^0/_0$ » » 1908 »	101 ր.	— կ.
$4^0/_0$ Պետական գանձար.	100 ր.	— կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդօն 10 ֆ. ստեր.	94 ր.	90 կ.
Բերլին 100 մարկ	46 ր.	38 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր.	67 կ.
Թաւրիզ 100 դրան	19 ր.	— կ.
Կ. Պոլիս 1 լիրա	8 ր.	67 կ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պօստատար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդատար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդատար արագընթ.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով՝ ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պօստային՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդատար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդատար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաթում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօստային՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդատար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար 6 ժամ 19 ր. առ., մարդատար-արագընթաց՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագոններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳՔԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—53

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների ուղղմամբ կատարում է կաշուետակ սրսկումներ, լուացումներ (сприндов.), վէրքի փաթթումն, դեղերի քսումն (втиранie) և այլն։ Էլեկտրականութիւն ռեվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեկտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Կարելի է և գրաւոր, ներփակելով վարձատրութիւն ըստ կարողութեան։ Ընդունելութիւնը 3—4 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ։
(օ. մ.) 857. 0—32

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12^1/_2$—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—$12^1/_2$.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—40

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր | առաւօտեան 9—12 ժ.
| երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—33

ԲԺԻՇԿ
Բ. ԱՂԱՄԱՐԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
Ընդունելութիւնը՝
Ամեն օր) առաւօտեան 9—$10^1/_2$ ժ.
) երեկոյեան 5—6 ժ.
Սօլօլակ, Ռափիչևսկայա փողոց, № 17.
(Ե. Հ.) 1256. 8—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ. Դաղբաշեանի
Ռուս-հայ լիակատար բառարան, գինը 8 ր., կազմով 9 ր. և աւել, նայած կազմին։ Հայ-ռուս լիակ. բառ., բաժանորդագինը 5 ր., առաջին բառ. գնողների համար 4 ր.։ Ռուսերէն այբբենարան և առաջին ընթերցարան, գինը 25 կ.։

Բոլոր գրքերիս ճանապարհածախսն ինձ վրա. չքաւորներին զիջում բոլոր գրքերից։ Ինչպէս նոյեմբ. 26-ի հաշւետուութիւնից երևաց, գրավ. պ. Գալուստ Գալստեանի մօտ նրա ինձնից ձեռք բերած Ռուս-հայ լիակ. բառարանից անվաճառ մնացել էր ընդամենը 16 օրինակ։ Պ. Գալստեանն ինձ ստորագրութիւն է տուել ոչ մի գրավաճառի այդ 16 օր. չը վաճառել, այնպէս որ իմ գրքերի առուտուրն իմ ձեռքին է։ Բագւում դիմել միմիայն գրավ. պ. Ֆարմանօվի (Пассажъ Лалаева)։ Ես այժմ ապրում եմ Թիֆլիսում (Классическая ул. № 8. А. Дагбашяну).
(Հ.Ե.Հ.) 1273. 3—1

Լոյս տեսաւ
Լեոն Մանուէլեանի
ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
I պրակը 40 կոպ.։ Աշակերտներին 30 կոպ.։ Դիմել Թիֆլիս՝ «Կենտրօնական» և «Գուտենբերգ» գրավաճառանոցներին, իսկ հեղինակին՝ Ալէքսանդրօպօլ։
Տպվում է II պրակը։
(օ. մ.) 1255. 3—3

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՐՈՂ ՄԻ ՀԱՅ
Բժիշկ
32 տարեկան, միայնակ,
ՄՏԱԴԻՐ Է ԱՄՈՒՍՆԱՆԱԼ
ՀԱՅ ՕՐԻՈՐԴԻ
կամ
ԱԶԱՏ ՏԻԿՆՈՋ ՀԵՏ,
տարիքը 23—27, նիւթապէս ապահովված։ Մանրամասնութիւնը (կրթութեան կամ ընտանեկան դիրքի մասին) գրաւոր (հայերէն կամ ռուսերէն) իր մի լուսանկարի հետ ուղարկել (заказнымъ) այս հասցէով гор. Рыбинскъ, до востребованія Ф. М. Бѣлова, для доктора. Գրութիւնը կը մնայ գաղտնիք. լուսանկարը կարելի է յետ դարձնել։
(Հ. Հ.) 1262. 2—2

Պօվար
18 տարվայ փորձված և խնայող ամեն բանում, համեստ բնաւորութեան, պատրաստում է եւրոպական և հայկական կերակուրներ և ամեն տեսակ քաղցրեղէններ։ Համաձայն է գնալ ուրիշ քաղաքներ։
Հասցէն՝ Սօլօլակսկայա փողոց, № 14.
Молочная Самуэлянца. 1269. 1—1

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊԵՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO — ՊԻՉԻԼԻՆ“
Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացքը։
ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъезжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախսը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկ. Ընկ. դեղային ապրանքների վաճառանոցում։
(Հ.) (II. 124817) 540. 0—11

ԲԱՑՎԱԾ Է 1910 Թ. „ԱՂԲԻՒՐԻ“ ԵՒ „ՏԱՐԱԶԻ“ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Այս տարվայ դեկտեմբերի 23-ին «Աղբիւրի» և «Տարազի» 1910 թ. 5000 բաժանորդ (№ №)-ների մէջ վիճակ կը գցվեն 500 առարկաներ՝ արձաններ, գրքեր, պատկերներ, դպրոցական առարկաներ, սեղանի ընտիր զարդեր, ալբօմներ՝ պօստ-կարտերի և լուսանկարների համար, ժամացոյցներ՝ ծոցի, սեղանի վրա դնելու, պատի օրացոյցի համար ընտիր, ռելիէֆ և փառահեղ կարտօններ, գրասեղանի զարդեր և այլն, և այլն։
Այդ առարկաները առաջիկայ դեկտեմբերի 1-ից Գրական-Գեղարվեստական Սալօնում դրված կը լինեն ի ցոյց 1910 թ. բաժանորդագրվողների։
Վիճակահանութեան մասնակցում են անխտիր բոլոր բաժանորդները՝ լինեն նրանք դպրոցական աշակերտ՝ 1 ր. վճարողներ, թէ 2 ր.։ «Աղբիւր» և «Տարազ» միևնոյն հասցէով ստացող բաժանորդներին տրվում է 2 №№։ Վիճակին մասնակցելու համար բաժանորդը չը պէտք է աւելորդ վճար անէ. վիճակահանութիւնը բոլորովին ձրի է։ Հասցէ՝ Тифлисъ, „Агбюръ“-„Таразъ“.
1237. 3—3

ՀԻՒՐԱՆՈՑ „ԿԱՎԿԱԶ“ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Տէլէֆօն № 358.
Սրանով պատիւ ունենք յայտնելու պ. պ. յաճախորդներին, որ նոյեմբերի 20-ից հիւրանոցի ճաշարանում
ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ ՑԱՆԿԱՑԱԾ ԸՆԹՐԻՔ
Բաղկացած 1 կերակրից և 1 թաս սուրճից—50 կոպէկ։
Հիւրանոցն ունի՝ յատկապէս պատուէրների համար՝ նորաստեղծ դահլիճ, ուր ընդունվում են պարահանդէսների, հարսանիքների և ընկերակցական ճաշկերոյթի պատուէրներ։
Դահլիճն ունի պիանինօ և առանձնասենեակներ։
Յարգանքով Ի. Կոչիկյայա և Ն. Սիխարուլիձէ
(օ.մ.) 870. 100 40

ՇՔԵՂ! ԱՄՈՒՐ!
=ԿՕՇԿԵՂԷՆ=
Ս.-Պետերբուրգի Մեխանիկական
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Իսկականը միայն այս դրօշմով
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԿՐԷՄ ԵՒ ԱՊՐԷՏՈՒՐԱ
ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԼԱՒ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ
Մեծաքանակ վաճառքը կատարում է
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
„ТРЕУГОЛЬНИКЪ“ ՖԻՐՄԱՅՈՎ
182. 0—34

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 3.